



087.1

h - 34

0871

Ի-34

ՄՐ

Մ. ԻԼԻՆ

ՀԱՐՅՈՒԹ ՀԱԶԱՐ
Ի Ե Զ Ո Ւ


Տ Օ Տ Ա



Առաք. փոխադրեց Մ. Գուրգարյան

1934

ԳԵՏԱՀԱՏ-ԳԵՂԱՀԱՏԱՄԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ



26 APR 2013

16267

ԲԱՐՁՐ ՅԵՎ ՄԻԶԻՆ ՏԱՐԻՔԻ ՀԱՄԱՐ



Պատաժիանատու խմբագիր Ա. Հայրյան. Լեզվական խմբագիր Արշ. Առուամյան. Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Գևալյան. Սրբագրիչ Մ. Գևորգյան. Համեմված և արտադրության 20 ապրիլի 1934 թ. Ստորագրված և տոմելու 13 մայիսի 1934 թ. Ստատիստիկա Ա. 6—105×148 նովա 518 մամակ Գլավին 8510, Փառվեր № 2141 Տիրաժ 4000. Տիու Ա. Ստաց 1932 թ. ԱԿԿՈ Բայով-Դօն



222-90

«Հիմք հազար ՈՒՐ, յոր
հազար ԽՆՉՊԵՍ,
հարյուր հազար ԽՆՉՈՒ»

Ո. Կիպլինգ

ՃԱՐՏԱՐԴԱԽԾՈՒՆ ՍԵՆՅԱՆՈՒՄ

Չեր տանն ամեն որ վառարան
ե վառվում, պրիմուս և թշում,
կարտոֆիլ և յեփվում:

Դուք ել յերեխ հրաշալի կեր-
պով վառարան եք վառում կամ
կարտոֆիլ յեփում: Հապա, փորձե-
ցեք բացատրել, թե ինչու փայտը
վառվելիս ճըթճըթում ե վառա-
րանում, ինչու ծուխն անցնում ե
ծինելույզի և վոչ թե սենյակի
մեջ. Յերբ նավթն այրվում ե, ին-
չից և մուր առաջանում: Ինչու

տապակած կարտոֆիլը կարծը կե-
ղեվով ե պատած, իսկ յեփածը —
վոչ:

Վախենում եմ, վոր չկարողա-
նաք ձիշտ բացատրել այս բոլորը:
Կամ թե չե՛ ինչո՞ւ ջուրը հանգ-
ցնում ե կրակը:

Իմ ծանոթներից մեկն այսպես
պատասխանեց, «հանգնում ե, վո-
րովհետև թաց ե և սառը»: Բայց
չե՛ վոր նավթն ել թաց ե ու սառը,
հապա փորձեցեք նավթով հանգ-
ցնել կրակը:

Չե՛, ավելի լավ ե չփորձեք, թե
չե ստիպված կլինեք հրշեցներին
կանչել:

Տեսնում եք՝ պարզ հարցեր են,
իսկ պատասխանելն այնքան ել
հեշտ չե՛:

Կուզեք, յես ձեզ տասներկու
այսպեսի հանելուկ ասեմ ամենա-
հասարակ բաների մասին:



1
Վնդն ե ավելի շատ տաքացնում-
յերեք շապիկը, թե՛ յեռակի հաս-
տության մեկ շապիկը:

2
Կարող են լինել ողից կազմված
պատեր:

3
Կրակը կարող ե ստվեր ունենալ:

4
Ինչո՞ւ ջուրը չի այրվում:

5
Զուրը կարող ե տուն պայթեց-
նել:

6
Ինչո՞ւ վառարանը վառելիս դըռ-
ուում ե:

7
Ինչո՞ւ յենք փչում, յերբ ուզում
ենք հանգցնել վառած լուցկին:

8
Կա արդյոք թափանցիկ յերկաթ:

9
Ինչո՞ւ հացի միջուկը ծակոտկեն
ե լինում:

Վառարանը տաքացնում ե, վո-
րովիետև վառում են. իսկ մուշ-
տակն ինչու յե տաքացնում:

11

Ինչու մահուդից կարած հա-
զուստն արդուկելիս արդուկը
քում են թաց շորի վրայով:

12

Ինչու սառուցից վրա կարելի յե
շմշկեր, իսկ հատակին՝ վոչ:

Այս հարցերին հազիվ թե տասը
ընթերցողից մեկը պատասխանի:
Մեղ շրջապատող իրերի մասին
մենք շատ քիչ բան գիտենք: Շատ
անգամ ել չես իմանում՝ ում հար-
ցնես:

Ծոգեկառքի, հեռախոսի կամ
ելեկտրականության մասին գրքեր
շատ կան. մուշտակի ու յեփած
կարտոֆիլի մասին բան չես գտնի:
Ճիշտ ե, այսպիսի գրքեր ել
կան, բայց ինչքան պիտի կարգաս,
վոր պատասխանես մեր տասներկու
հարցին: իսկ այդպիսի հանելուկ:

ներ կարելի յե վոչ թե տասներ-
կուսը, այլ հայրուը հազարը հնա-
քեր:

Չեր սենյակի ամեն մեկ իրը մի
հանելուկ ե:

Ինչից, ինչպես, ինչի համար են
շինած այդ իրերը:

Վաղնաց ե, վոր հնարել են այդ
իրերը— մատնոցը, ասեղը, թաշ-
կինակը, կոշիկը, ուետինը, գրչա-
ծայրը և այլն և այլն: Ահա սե-
ղանի վրա զրած ե դանակ ու
պատառաքաղ. նրանք միշտ միա-
սին են լինում, կարծես քույր ու
յեղբայր լինեն, բայց գիտեք, վոր
դանակը առնվազն հարյուր հազար
տարով մեծ ե պատառաքաղից:
Դանակ, ճիշտ ե՝ քարե դանակը
դեռ նախապատմական մարդն եր
գործածում, իսկ պատառաքաղնըն-
դամենը 300 տարի յե՝ ինչ գոր-
ծածության մեջ ե: իսկ հայելու
պատմությունը:

Մարդիկ շատ լավ գիտեն, թե
յերը և ովք ե հնարել հեռախոսն
ու ելեկտրական լամպը, մինչդեռ


փորձենք հարցնել, թե՝ վաղուց ե,
վոր մարդիկ սապոն են գործա-
ծում կամ կարտոֆիլ յեփում, ի՞նչ ե
կավիճը կամ մարգարիտը, ի՞նչպես
են քորոցներ շինում, կամ ի՞նչպես
մեխերն արկղներում դարսում...

Այս հարցերին շատ քչերը կկա-
րողանան պատասխանել: Մենք
հափշտակությամբ ենք կարդում
հեռու և անձանոթ յերկրներում կա-
տարգած ճանապարհորդություն-
ների մասին, և խելքներս չի կրտ-
րում, վոր մեզնից մեկ յերկու քայլ
այն կողմ և նույնիսկ ավելի մո-
տիկ կա մի անհայտ, զարմանալի
հանելուկային յերկիր, վորը կոչ-
վում ե

ՄԵՐ ՍԵՆՅԱԿԸ:

Յեթե մենք ցանկանանք ուսում-
նասիրել, կարող ենք ճանապարհ-
վել ցանկացած ըստելին. վոչ վրան,
վոչ հրացան և վոչ ել առաջնորդ
և պետք մեզ: Քարտեղ ել պետք
չի. ճանապարհը չենք կորցնի:

Ահա մեր կայարանները



ԶՐԻ ԽՈՂՈՎՈՎԱԿ
ՎԱՌԱՐԱՆ
ՍԵՇԱԿ ՅԵՎ ՊԼԻՏԱՆ
ԴԱՐՈՒԿԻ ՊՂԻՆՉԱՆԵՐՈՎ
ԲՈՒՖԵՏ
ՊԱՇԱՐԱՑ

ԱՌԱՋԻՆ, Հ.Ս.ՅԱ.ՐԱ.Ն
ԶԲԻ ԽՈՂՈՎԸԿ



ՎԱԳԱ՞ԻՑ Ե, ՎԱՐ ՄԵՐԹԻԿԻ ԼՎԵՑՎՈՒԽԻՄ ԵՆ

Ներկայումս շատ քաղաքներում ջրմուղ կա: Մեզանից յուրաքանչյուրն այժմ որական գործ ե ածում 10—12 դույլ ջուր, հին ժամանակ մեծ քաղաքի ամեն մի բնակիչ գործ եր ածում որական միայն մեկ դույլ: Ասենք չեր եւ կարող ավելի ջուր գործածել լվացքի, լվացվելու և այլ պետքերի համար:

Ջրմուղ չկար. մի տեղ ջրհոր եր լինում, փորտեղից մեծ դժվարու-

թյամբ եյին ջուր հանում. դեռ մեկ մեկ ել այդ ջուրը կեղտոտ եր լինում. Ջրհորում սատկած մկներ կամ կատուներ եյին գտնում: Առուների ջուրն ավելի կեղտոտ եր լինում, կենզանիներն եյին մտնում, աղը եյին լցնում, յերբեմն ել ցամաքում եր. լավ եր յեթե գյուղում կամ քաղաքում աղբյուրներ կային:

Անցյալում մարդիկ զուրկ ելին վոչ միայն ջրից, այլ և մաքրությունից. վաղուց չե, վոր մարդիկ սկսել նն լվացվել: Յերեք հարյուր տարի առաջ նույն խոկ իշխաններն ամեն որ չեյին լվացվում: Ձրանսիական թագավորի ննջարանում դուք կտեսնեյիք շքեղ կահավորություն—այնպիսի մեծ մահճակալ, վոր անհնար եր բանալ առանց հատուկ գործիքի: Դուք այստեղ կգտնեյիք վոսկեղոծ սյուներով շքեղ ամպհովանի, վոքրիկ տաճարի նման. Վենետիկի հայելիներ, հոլակապ զորգեր, լավագույն վարպետների շինած ժամացույց-



ներ, բայց ինչքան ել վնասուելիք,
չելիք գտնի վոչ միայն լվացարան,
այլ և հասարակ թաս:

Ամեն առավոտ թագավորի հա-
մար բերում եյին մի թաց սրբիչ:
վորով նա սրբում եր յերեսն ու
ձեռները և բոլորի կարծիքով
այդքանը միանգամայն բավա-
րար եւ:

Լվացքի համար ել ջուր շատ
չեյին գործածում: Սպիտակեղեն
ունեյին, բայց ինչ ոգուտ դրանից:
Նույն իսկ հարուստներն ամիսը մեկ
անգամ հազիվ եյին փոխում սպի-
տակեղենը: Այդ ժամանակ մտա-
ծում եյին վոչ թե շապիկի մաքրու-
թյան մասին, այլ նրա թանկա-
գին ժանյակների, ասեղնագործած
կրծքի ու թերթի մասին: Գիշերն
ել շապիկը հանում եյին, գը-
նում մյուս հագուստների կողքին
ու մերկ քնում:

Մեզանից միայն յերկու հարյուր
տարի առաջ մարդիկ զիխի ընկան,
վոր սպիտակեղենը պետք ե շուտ-
շուտ փոխել:

Թաշկինակն ել միայն յերկու-
յերեք հարյուր տարվա պատմու-
թյուն ունի:

Առաջ թաշկինակ քչերն եյին
գործածում: Նույնիսկ հարուստ-
ներից շատերը շուայլություն եյին
համարում այդ:

Շքեղ ամպհովանիները շինում
եյին վոչ միայն գեղեցկության,
այլ գլխավորապես միջատներից
ազատվելու համար: Նույնիսկ պա-
լատներում անթիվ ու անհամար
միջատներ եյին վիստում: Իին պա-
լատներում մինչև այսոր ել միա-
ցել են փայտողիկից պաշտպանվելու
հավանոցներ: Բայց ամպհովանին
չեր փրկում: միջատներն ավելի շատ
եյին կուտակվում նրա ծալքե-
րում:

Կոյուղի չկար: Կեղտոտ ջուրն
ուղակի գուրս եյին թափում լու-
սամուտներից, աղբաջուրը մեծ մա-
սամբ հօսում եր փողոցի առունե-
րով: Այսպիսի գարշանոտություն
եր առաջանում, վոր անցորդները
քթերը բռնած փախչում եյին:



ԵԼ ի՞նչ կա զարմանալու, վոր
 անցյալում մարդիկ ավելի հաճախ
 եյին հիվանդանում, քան այժմ:
 Չեյին ել յենթաղբում, վոր վա-
 րակի բունը — հենց այդ կեղտն ե:
 Պատահել են դեպքեր, յերբ ամ-
 բողջ քաղաքներ վոչնչացել են
 ժամանակախից, «սև ծաղկից», խոլե-
 րայից և այլ համաճարակներից:
 Հարյուր յերեխայից հինգն եր
 միայն տաս տարեկան դառնում.
 Մյուսները մեռնում եյին տան-
 շանքներով։ Փողոցներում և հրա-
 պարակներում վխտում եյին ծաղ-
 կից ու բորոտությունից այլան-
 դակված հիվանդներ։

Սակայն ի՞նչը մեղ փրկեց այդ
 դրությունից, ամրացրեց մեր մար-
 մինը, առողջացրեց մեզ։ Զրմուղը,
 սապոնը, մաքուր շապիկը։

ԻՆՉՈՒ ՅԵՆ ԶՐՈՎ ԼՎԱՑՎՈՒՄ

Ի՞նչու յե ջուրը մաքրում կեղտը:
 Գուցե նա իր հետ տանում ե
 կեղտը, ի՞նչպես գետը տաշեղն ե
 տանում։

Հապա, փորձեցեք՝ ձեր կեղտու
 ձեռքերը պահեցեք ջրածորակի
 տակ։ Կմաքրվեն արդյոք։ Իհարկե,
 վոչ։ Լվացվելիս մենք մեր ձեռքերն
 իրար ենք շփում։ Ինչո՞ւ։
 Վորպեսզի քերենք, հանենք

ԿԵՂՏԸՐ

Ճիշտ այդպես ենք վարվում նաև
 սպիտակեղենի հետ։ Լվացարար-
 ները հո շորերը հենց այնպես չեն
 դնում ջրի մեջ։ Նրանք լվանում
 են, ձեռքներով տրորում, յերբեմն
 ել թակիչով ու խոզանակով թա-
 կում կամ տրորում։ Այսպես մաք-
 րելիս ջուրն իր հետ հեշտությամբ
 տանում ե կեղտը։



**ՄԵՐԴՆ Ի՞ՆՉՊԵՍ ՀԵՐԿԵԴԻՔ ՌԵԽԵՏԵԼ
 ՍԵՊՈՒԻ ՊԼՊՀԵՆԵՐԻՆ**

Մենք մոռացանք մի բան, առանց
 վորի լվանալ անհնար ե։

ՄԱՊՈՆԸՐ

Յեթե մենք առանց սապոնի
 լվացք անեյինք կամ լվացվեյինք,
 միշտ ել կեղտու կմայինք։ Մա-

պոնը կեղաի ամենամեծ թշնամին
ե։ Որինակ՝ մուըը. նա շատ դժվա-
րությամբ ե մաքրվում։ Մուըը
կազմված ե ածուխի անհավասար
ու սրածայր ամենամանրիկ կտոր-
ներից։ Այս հատիկները մտնում են
կաշի անցքերի մեջ ու կպչում, —
դե, արի ու դուրս հանիր նրանց
այնտեղից։

Վերցրեք սապոնը և մի լավ սա-
պոնեցեք ձեր ձեռքերը։ Մապոնը
հարձակվում ե մրի վրա, կպչում
նրան, դուրս քաշում կաշի անց-
քերից ու ծալքերից։

Տեսնենք, թե ինչպես ե կատար-
վում այս։

Լավ մաքրում ե այն սապոնը,
վորը լավ ե փրփրում։

Ուրեմն գործ կատարողը փըր-
փուրն ե։

Իսկ ինչ ե փրփուրը։

Դիտեցեք. նա կազմված ե ամե-
նամանրիկ պղպջակներից, ողի
ամենափոքր դնդակներից, վորոնց
պատերը կազմված են ջրից։ Ահա
հենց այս պղպջակներն են իրենց

հետ տանում մուըը, վորի մաս-
նիկները կպչում են փրփուրի
պղպջակներին և նրանց հետ գը-
նում։

Մապոնն ոգտագործում ենք նաև
գործարաններում, յերբ ուղում
ենք հանքն ազատել քարերի խառ-
նուրդից։ Թե հանքը և թե քարը
սուզվում են ջրի տակը, սակայն
յերբ մանրում ենք, նրանց մաս-
նիկները կպչում են փրփուրին ու
չեն սուզվում։ Պղպջակները նրանց
պահում են ջրի յերեսին։ Այստեղ
ել սկսում են ջոկել քարի կտոր-
ները ջրի յերեսին յերկար չեն
մնում և նստում են մեքենայի
տակն, իսկ հանքի կտորները մնում
են յերեսին։ Այս մասնիկներից
կազմված կեղևը հեշտությամբ
վերցնում են։

Ուրեմն, սապոնի պղպջակները
միայն զվարձության համար չեն
(հիշեցեք ձեր խաղերը սապոնի
պղպջակներով)։ Հնարագետ մարդն
ոգտագործում ե այդ պղպջակները
և ծառայեցնում իր պետքերին։



ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆ ԶՈՒՐ ԽՄԱԿՄ

Ահա մի պարզ հարց ևս, վոր
կարծես թե ավելորդ ենույն խոկ
տար: Սակայն յեթե հարցնեք,
կտեսնեք, վոր տասից մեկը հազիվ
թե պատասխանի, թե ինչու յենք
ջուր խմում:

Դուք անշուշտ կասեք — ջուրը
խմում ենք, վորովհետև ծարավում
ենք:

Իսկ ինչու յենք ծարավում:

Վորովհետև մեր ընդունած ջուրը
շարունակ ծախսում ենք, ուստի
անհրաժեշտ ելլացնել մեր մարմնի
ջրի պաշարը:

Ցեթե արտաշնչեք սառը ապակու
փրա, կտեսնեք, վոր նա ծածկվում ե
ջրի մանրիկ-մանրիկ կաթիլներով:

Վորտեղից են այդ կաթիլները:

Մեր մարմնից,

Կամ թե չե՛ շոգ յեղանակին
քրանում ենք:

Վորտեղից ե այդ քրտինքը:

Դարձյալ նույն տեղից — մեր
մարմնից:

Յեկ քանի վոր մեր մարմնի մեջ
յեղած ջուրը ծախսում ենք, ուրեմն
հարկավոր ե այդ ծախսածը լրացնել:

Մարդն որական 8 — 12 բաժակ
ջուր ե կորցնում. ուրեմն պետք ե
այդքան ել խմի կամ ուտի:

Միթե ջուրն ել են ուտում:

Այս, հապա ինչ եյիք կարծում:
Մսի, բանջարեղենի, հացի և ամեն
մի ուտելիքի մեջ ավելի շատ ջուր
կա, քան թե կարծը մասեր: Միսը
յերեք անգամ ավելի ջուր ե պա-
րունակում, քան կարծը մասեր, իսկ
վարունգը կամ կաղամբը համարյա
ամբողջովին ջրից են բաղկացած:

Հենց մեր մարմինն ել այնքան
ջուր ե պարունակում, ինչքան վա-
րունգը: Ցեթե քո՞քաշը 25 կիլո-
գրամ ե, նշանակում ե դրանից
22 կգ-ը ջուր ե և միայն 3 կգ-ը
կոշտ նյութեր: Մեծ մարդու մարմնի
մեջ ջուրն ավելի քիչ ե, բայց
և այնպես ելի նրա քաշի մոտ $\frac{3}{4}$ -ը
ջուր ե:

Այստեղ հարց ե ծագում. հապա
ինչպես ե, վոր մարդը չի «թափ-

վում», ինչպես հեղուկը, իիսելը
և այլն:

Բանն ել հենց այն ե, վոր կա-
րեոր չե թե ինչից ե կազմված
առարկան, գլխավորն այն ե, թե
ինչպես ե կառուցված.

Յեթե խոշորացույցով դիտենք
մսի կամ վարունգի մի կտոր, կտես-
նենք, վոր նա կազմված ե հյու-
թով լի բազմաթիվ բջիջներից:
Հյութը բջիջից դուրս չի թափ-
վում, վորովհետև չորս կողմից պա-
տաճ ե թաղանթով: Ահա ամբողջ
գաղտնիքը: Ուրեմն՝ ջուրը մեր
մարմնի կառուցվածքի գլխավոր
նյութն ե:

Յեվ գարմանալի չե, վոր մարդ
կարող ե յերկար ժամանակ առանց
կերակրի մնալ, մինչդեռ առանց
ջրի նա մի քանի որ ել չի դիմանա:

ԿԸՐՈՂ Ե ԵՐԴՅՈՎ ԶՈՒՐԾ ՏՈՒՆ
ԳԵՅԹԵՑՆԵԼ.

Զուրը՝ կարծես թե շատ անմեղ
մի նյութ ե. բայց յերբեմն նա
պայթում ե վառողի պես: Այդ դեռ

քիչ ե. յեթե չես իմանում վարվել
ջրի հետ, նա մի քսան անգամ
ավելի վտանգավոր ե, քան վառողը:
Յեղել են դեպքեր, յերբ ջուրը
պայթեցրել ե բազմահարկ տներ,
և զոհվել են տասնյակ մարդիկ:

Սրանից մոտ քառասուն տարի
առաջ Ամերիկայում մի այսպիսի
դեպք պատահեց: Գործարանի ներ-
քին հարկում, հսկայական հնոցում
դրված եր մի մեծ կաթսա, այն-
քան մեծ, վոր մի լճի ջրի չափ
ջուր եր վերցնում:

Տաքացնելիս ջուրը յեռում եր,
և շոգին խողովակներով անցնում
շոգեմեքենայի մեջ:

Մեկ անգամ, մեքենավարի ան-
փութության պատճառով, կաթ-
սայի ջուրը պակասել եր, իսկ
հոսը — հա վառվում եր, կաթսայի
պատերը շիկացել եյին. մեքենա-
վարն առանց յերկար ու բարակ
մտածելու, ջուր բաց թողեց շի-
կացած կաթսայի մեջ:

Դուք գիտեք, չե, թե ինչ ե
պատահում, յերբ շիկացած յեր-

կաթի վրա ջուր են լցնում: Այդ
ջուրն ամբողջությամբ իսկույն գո-
լորշի յե զառնում:

Նույնը պատահեց և այստեղ:
Ջուրն իսկույն գոլորշիացավ, լցրեց
կաթսան, ճնշեց նրա պատերին,
վորոնք չդիմացան այդ ճնշման և
պայթեցին: Մրանից և քանդկեց
տունը:

Յեղել են ավելի սարսափելի-
դեպքեր. Գերմանիայում մեկ ան-
գամից պայթեց քսան յերկու կաթ-
սա: Շուրջը գտնված բոլոր տները
քանդվեցին: Կես կիլոմետր հեռա-
վորության վրա գտնվել ելին կաթ-
սաների կտորները: Ահա, թե ինչ
սոսկալի ուժ ունի գոլորշին:

Մեր տանն ել որական մի քանի
հազար կաթսա յե պայթում, սա-
կայն... մանրիկ կաթսաներ: Յերբ
վառարանում չթշթում ե փայտը,
նշանակում ե, ջուրն ե պայթեց-
նում, Բոլորովին չոր փայտ չի լի-
նում: Նրա ծակոտիներում միշտ
ել ջուր ե մնում. ահա այդ ջուրը
շերմությունից գոլորշիանում ե և

աղմուկով պայթեցնում փայտի
հյուսվածքները:

ՊԻՆԳ ԶՈՒԲ

Պինգ ջուրը—սառույցը նույն-
պես յերբեմն պայթում ե:

Շոգին աներ ե պայթեցնում,
իսկ սառույցն ամբողջ լեռներ ե
քանդում:

Այսպես ե լինում: Ջուրն աշ-
նանը լցվում ե ժայռերի ճեղքերի
մեջ, ձմեռը սառչում և սառույց
դառնում: Մենք գիտենք, վոր սա-
ռույցն ավելի յե տեղ բռնում: Նրա
ծավալը $^{1/10}$ -ով ավելի յե ջրի ծա-
վալից: այդ լայնացած մարմնի
(սառույցի) ճնշման տակ տրաք-
վում են նույն իսկ ամենակարծր
քարերը:

Նույնպիսի յերևույթ ե, յերբ
պայթում են ջրմուղի խողովակ-
ները: Այս բանը կանխելու համար
պետք ե ձմեռնամտին խողովակները
խնամքով փաթաթել վորևե բանով,
որինակ՝ թաղիքով, խսիրներով և
այլն:

ԻՆՉՈՒ ԶԻ ԿԸՐԵԼԻ ՀՄՇԱԿԵԼ
ՀԱՏՎԱԿԻ ՎՐԱ

Յես հարցըի մի տղայի, թե՝
ինչու չի կարելի չմշկել հատակի
վրա. — Վորովինետև սառույցը շատ
կարծր ե ու վողորդ, իսկ հատակը
սառույցի պես կարծր չե, — պա-
տասխանեց նա:

Բայց չե վոր հատակն ել հա-
ճախ քարից ե լինում, իսկ քարե
հատակի վրա նույնպես անկարելի
յե չմշկել:

Յերբ մենք սղում ենք սա-
ռույցի վրա, սառույցը շփումից հալ-
վում ե. Չմուշկների և սառույցի
արանքում գոյանում ե ջրի շերտ։
Յեթե այդ շերտը չլիներ, սառույցի
վրա սղղալը նույնքան դժվար
կլիներ, ինչքան հատակի վրա։ Չուրը
նվազեցնում ե շփումը սառույցի
և չմուշկների միջն, ինչպես յուղը
մեքենայում։

Այս ե պատճառը, վոր սառցա-
բանները լեռներից սահում են գեպի
ցած։ Սառույցի ծանրության տակ

ներքեմի շերտերը հալվում են, և
սառցագետերն իջնում են լեռ-
ների լանջով, ինչպես մեր չմուշկ-
ներն են սղում սառցադաշի
վրայով։

ԿՈ ԱՐԴՅՈՔ ԵՆԹԱՓԵՆՑ ԶՈՒՐ ՅԵՎ
ԹԱՓԵՆՑԻԿ ՅԵՐԿԱՐ

Զեղնից ամեն մեկն ել կասի, վոր
ջուրը թափանցիկ ե. այն ինչ —
միայն ջրի բարակ շերտերն են
թափանցիկ։ Ովկիանոսի հատակում
մշտական գիշեր ե, վորովինետև
արեկի ճառագայթները չեն կարո-
ղանում թափանցել ջրի հաստ շեր-
տերի միջով։

Յեվ վոչ միայն ջուրը. ամեն մի
նյութ ել թափանցիկ ե, յեթե բա-
րակ շերտերով ենք վերցնում, իսկ
հաստ շերտերը թափանցիկ չեն։
Վերցրեք, որինակի համար, թա-
փանցիկ ապակու մի շերտ։ Նայե-
ցեք կողքից. ապակին անթափանց
ե դառնում։

Վերջերս մի գիտնական յերկա-
թից պատրաստել ե շատ բարակ

շերտ՝ հազարերորդ միլիմետր հաստությամբ։ Այս թերթիկը թափանցիկ է ապակու պես և համարյա անգույն։ Գրքի յերեսին դնելիս կարելի յէ լինում կարդալ նույնիսկ ամենամանը շրիֆտը (տառերր)։

Այդպիսի թափանցիկ թերթիկներ պատրաստում են նաև վուկուց և ուրիշ մետաղներից։



ՎԵՐԱՐԴԻՑ Ե ԽՆՉ ՄԱՐԴԻԿ ԾԱՆՈԹԱՅԵԼ ԵՆ ԿՐԸԿԻՆ

Զմուան յերեկոյին ի՞նչ հաճույքով ե ճրթճրթում փայտը՝ վառարանում։ Յերբ նայում ես կրակին, շատ տալորինակ բաներ ես հիշում — հրզենվող քաղաքներ, պաշարված բերդեր։ Փայտի ճայթյունը հիշեցնում ե թնդանոթի վորոտ, իսկ կրակի լեզուները նման են բերդի պարիսպների վրա վազող զինվորների։



Հին ժամանակ մարդիկ կարծում
եյին, թե կրակի մեջ ապրում են
հրեղեն փոքրիկ մողեսներ — կրակի
վոգիներ: Յեղել են այնպիսիները,
վորոնք աստվածացրել են կրակը,
նրա պատվին մեհյաններ կառու-
ցել: Այս մեհյաններում հարյու-
րավոր տարիներ վառվել ե կրակի
աստծուն նվիրած ջահը — անշեց
հուրը:

Ամենահին սովորույթներից մեկն
ե անշեց հուր պահպաննելը: Տաս-
նյակ հազարավոր տարիներ առաջ
մարդիկ չեյին կարողանում կրակ
ստանալ: Նրանք կրակը գտնում
ելին պատրաստի վիճակում, ինչ-
պես գտնում են թանկագին քա-
րերը: Զարմանալի չե, վոր կրակն
այն ժամանակ պահում-պահպա-
նում եյին թանկագին գանձի նման:
Յեթե հանգչեր, վորտեղից պետք
ե նորը բերեյին:



Յերբ կայծակից բռնկվում եր
ծառը, մարդիկ վախով ելին դի-
տում «կրակե գաղանին», վորը
լափում եր ծառը, ճարճատյունով

կոտրտում ճյուղերը և լիզում
կեղեր: Մոտենալ — սարսափում
եյին, իսկ հեռանալ — չեյին ուզում
ցուրտ գիշերին հաճելի յեր ծառի
մոտ, կրակի առաջ:

Նախամարդը համարձակ եր. նա
հաճախ կռվի յեր բռնվում թափա-
մաղ հսկայի՝ մամոնտի կամ քա-
րայրի բնակչի՝ ահոելի արջի հետ:
Նախամարդկանց մեջ յեղան այն-
պիսիները, վոր չվախեցան նաև
կրակից, մոտեցան, վերցրին վառ-
վող ճյուղը և տուն տարան այդ
հրաշալի գյուտը. գուցե այսպիսի
փորձ արին շատերը, տարբեր տե-
ղերում: Ինչեիցե, գտնվեցին այն-
պիսիները, վորոնք ընտելացրին
կրակն այնպես, ինչպես ընտելաց-
նում են կենդանիներին:



Առաջին ելեկտրական լամպի
գյուտը վոչինչ ե այդ յերկար ձեռ-
ներով, մազմզոտ և ծուռվոտանի
մարդկանց գյուտի համեմատու-
թյամբ: Առանց կրակի մենք այժմ
ել քիչ բանով կտարբերվեյինք գո-
րիլայից կամ որանգ-ուտանից:

Բոցավառվող կրակը լուսավոռում եր նախապատմական մարդու գետնափորն ու քարայրը։ Անցան ելի հազարավոր տարիներ, մինչև վորմարդիկ սովորեցին կրակ ստանալ:

Ծանոթանալով կրակ ստանալու միջոցին, մարդն այլիս չեր վախենա, թե կրակը կկորցնի։ Յեթե փոթորիկ ու հեղեղը հանգցնելին կրակը, նա կարող եր նորը վառել։

Սակայն դեռ յերկար ժամանակ մեհյաններում վառվում եր անշեշ հուրը, հիշեցնելով այն շըջանը, յերբ կրակը հաղվագյուտ ու թան-կարժեք գանձ եր։

Տարորինակ ե, վոր կրակ ստանալու ամենահին միջոցը մնում ե մինչև այժմ ել. նախամարդը կրակն ստանում եր շփումից, մի ձողը մյուսին քսելով։

Մենք ել կրակն ստանում ենք շփումից, լուցկին տուփի կողին քսելով։

Իհարկե, տարբերությունը շատ մեծ ե։ Լուցկին վառելը մի վարկանի գործ ե, իսկ վայտի ձողիկ-

ները վառելու համար, ինչքան ել չոր լինեն, պետք ե չարչարվել հինգ րոպե, թերևս և ավելի։ Այն ել՝ ամեն մարդու գործ չե։ Լուցկին ամեն մեկը կարող ե վառել, բայց փորձեցեք կրակն ստանալ նախամարդու գործադրած միջոցով։ Շատ եմ կասկածում, թե կարողանաք վորեւ արդյունք ստանալ։

Ճիշտ ե, մինչև լուցկու գյուտը (1827 թ.) ուրիշ միջոցով ել եյին կրակ ստանում. հրահանը (պողպատ) խփում եյին կայծաքարին, ու կայծերից բռնկվում եր փափուկ աբեթը. առ շատ հարմար եր մանավանդ քամի ժամանակ, յերբ լուցկին հանգչում եր։ Բայց բոլորը չեյին կարող այս հարմարությունն ունենալ, բացի այդ՝ ձրգձրգվում եր, ժամանակ խլում։ Վերջերս այս միջոցն ավելի կատարելագործվեցին հանրածանոթ «վառիչ» (ՅԱԿԱԿԱ) միջոցով, վորը շատ տարածված եր. միայն աբեթի փոխարեն բենզինով ծծված պատրույգ եյին դնում։

ԲՆՉՈՒԻ ՅԵ ԼՈՒՅԿԻՆ ՎԸԹՎՈՒՄ

Նախամարդը մեր գործիքների նման գործիքներ չուներ—վոչ սըղոց, վոչ ռանդա, սղոցում ու հարթում եր սուր քարով կամ վոսկը բով։ Այսպիսի գործիքներով աշխատելն այնքան ել հեշտ չեր։ Այնքան եր շփում ու քերում, վոր փայտը տաքանում եր, յերբեմն ել բռնկվում։ Յերեկի այսպիսով նա գլխի ընկափ, վոր շփելով կարելի յե կրակ ստանալ Բայց, ինչպես ասացինք, այս միջոցը բավականին դըժվար եր։

Այլ բան ե լուցկին. լուցկու գըրիիկն այնպիսի նյութից ե պատրաստած, վոր մի քիչ տաքացնելուց վառվում ե։ Բավական ե լուցկու գլխիկը մոտեցնել տաքացրած յերկաթին (որինակ՝ տաք վառարանի դռան), և նա կրոնկվի։ Դյուրավառ նյութի շնորհիվ՝ լուցկին իսկույն բռնկվում ե, յերբ քսում ես տուփի կողին։ Ել ի՞նչ կարիք կա միքանի ըոպե շարունակ իրար շփել

փայտերը ինչպես անում եր նախապատմական մարդը, յերբ չոր ձողիկները յերկար ժամանակ իրար եր քսում։

ՎԸՂՈՒՅՑ Ե ԸՐԴԻՑՆԵ, ՎՐԲ ԼՈՒՅԿԻ ՈՒՆԵՆՔ

Ինչպես ասացինք, լուցկին միայն հարյուր տարվա պատմություն ունի։ Անցյալ տարի (1933 թ.) մենք տօնեցինք լուցկու առաջին գործարանի հարյուրերորդ դարեղարձր՝ Մինչև լուցկու զյոււաը 19-րդ դարի քաղաքացու գրանում լինում եր մի տուփ՝ մեջը յերեք տարորինակ իր—պաղպատի մի կտոր՝ հրահան, մի փոքրիկ կայծաքար և սպունզի նման մի փափուկ բան՝ աբեթի մի կտոր, վոր պատրաստում եյին ծառի կեղեից։

Հեռու չգնանք. մեր կողմերում ել մի քսան-յերեսուն տարի առաջ կարող եյինք տեսնել այդ նույն իրերը, մանավանդ զյուղական բնակչության մոտ, միայն մի քիչ ուրիշ կերպ։ Մեր զյուղացին հրահանը վեր-



ցնում եր մի ձեռքը, մյուս ձեռքում
կայծաքարը, փորի վրա դրած եր
աբեթի կտորը. հրահանով խփում եր
կածաքարին. վնչ մի արդյունք.
կայծեր չելին առաջանում կամ յե-
ղածն ել գուր եր անցնում: Ելի
յեր խփում: Դարձյալ իզուր: Նորից
մի անգամ—և վերջապես աբեթի
կտորը բռնկվում եր:

Մոտավորապես նույն ձեն ուներ
նաև վառիչը (զայշալկա), մի-
այն վերջինս ավելի հարմար եր,
թեթև և ավելի վստահելի, վորով-
հետև շուտ եր վառվում:

Այսպես գժվար եր «կրակը
ձեռքին ման ածելը», այսինքն՝ միշտ
իր տղամադրության տակ ունենալը:
Յերբ յեվրոպացի ճանապարհորդ-
ները ցանկացան Գրենլանդիայի
եսկիմոսներին սովորեցնել, թե ինչ-
պես կարելի յե կրակ ստանալ ես-
կիմոսները հրաժարվեցին: Նրանց
կարծիքով ավելի հեշտ եր կրակ
ստանալ իրենց ծանոթ միջոցով,
այսինքն՝ շփելով. նրանք բարակ
փոկի (կաշու) միջոցով պտտում

Եյին մի ձողիկ, վորը դրված եր
մի կտոր չոր փայտի վրա:
Յեվրոպացիները նույնպես շատ
ուրախ կլինեյին հրահան-կայծա-
քարը փոխարինու ավելի հեշտ մի-
ջոցով, ուստի և իրար յետեկց լույս
եյին ընկնում զանազան «քիմիա-
կան հրահաններ», մեկը մյուսից
ավելի տարորինակ:

Կային այնպիսի լուցկիներ, փոր
ունկվում եյին ծծմբաթթվի շփու-
մից. կային ապակե զլիսիկներով
լուցկիներ, փոր վառելու համար
պետք եր սեղմել ունելիքներով:
Կային ապակե առանձին գործիք-
ներ, բավականին բարդ կառուց-
վածքով բայց այս բոլորն ել կամ
շատ թանգ եյին կամ անհարմար:

Ալսպես շարունակվեց մինչև վոր
գտնվեց Փոսֆորային լուցկին:

Ֆոսֆորը (լուսածին) մի նյութ
ե, փորը վառվում ե թեթև մինչև
60 աստիճան տաքությունից: Կար-
ծես թե սա շատ հարմար եր լուց-
կու համար: Բայց և այնպես Փոս-
ֆորի լուցկիներն ել անպետք եյին.



թունավոր եյին և, վոր զլխավորն ե, շատ հեշտությամբ եյին բռնկվում։ Վառելու համար բավական եր քսել պատին կամ կոշիկի ճըտքին։ Վառվելիս պայթյուն եր առաջցնում։ Գլխիկը ցրվում եր փոքրիկ ռումբի նման։ Փոսֆորից բացի, նա իր մեջ պարունակում եր նաև ծծումբ, վորն այրվելուց հետո առաջցնում եր անախորժ հոտով ծծմբային գագ։

Մոտ վաթսուն տարի առաջ վերջապես գտան «անվտանգ լուցկին» կամ, ինչպես ասում են, «շվեդական լուցկին», վոր մինչև այժմ ել գործ ենք ածում։ Այս լուցկու գըլիկները Փոսֆորի փոխարեն պարունակում են ուրիշ վառվող նյութ։ Ծծումբ ևս չկա։ Այս լուցկիներն անվտանգ են և պակաս թունավոր, քան Փոսֆորի լուցկիները։

Շատ հետաքրքրական է լուցկու արտադրությունը։ Այստեղ ամեն ինչ մեքենաներն են կատարում։ Փայտը բաժանում են տախտակների, մի ուրիշ մեքենա տախտակ-

ները բարակ ձողիկների յե վերածում, ձողիկներն անցնում են անընդհատ շարժվող ժապավենի վրայով, մտնում պարաֆինի, ապա մի ուրիշ լուծվածքի մեջ։ Պատրաստի լուցկիները մեքենայի միջոցով դարսվում են փոքրիկ տուփերի մեջ, վոր պատրաստում են նույն գործարանում։

Լավ կահավորված լուցկու գործարանն որական կարող և պատրաստել մոտ հարյուր միլիոն լուցկի, այսինքն՝ յերկու միլիոն տուփ կամ յերկու հարյուր հազար կապոց (10-ական տուփ)։

ԽՍՀՄ-ում ներկայումս լուցկու արդյունաբերությունը շատ ե զարգացել. 1932 թ. մենք ունեյինք մոտ 30 գործարան՝ մեծ մասամբ ՌՍՖԻՀ հյուսիսային մասում և Բելոռուսիայում։

ԽՆՉՈՒ ԶՈՒՐԸ ԶԻ ԸՅԵՎՈՒՄ

Կան այնպիսի առարկաներ, վոր շատ տաքացնելուց այրվում են, մյուսները փոքր ջերմությունից ել

Իսկ ինչու առաջ վոչ ածուխ
կար, վոչ ել ջուր:

Դա ճիշտ այնպես ե, ինչպես
կառուցված տան մեջ չեն յերկում
գերաններն ու մեխերը: Թէ՛ գերան-
ները և թե՛ աղյուսներն ու մե-
խերը յերեւմ են հրդեհի դեպքում:
Նույնը և այստեղ. ջուրն ու ածուխը
նկատելի յեն դառնում միայն այն
ժամանակ, յերբ մենք փոքրիկ հըր-
դեհ ենք առաջացնում — վառում
ենք մոմը:

Լավ. ասենք թե՝ մոմը վառելիս
ջուր և ածուխ ենք ստանում. բա-
նուր են չքանում սրանք:

Չուրը շոգիանում ե ու ցնդում.
Դա գոլորշին եւ, վորնստել եր դդալի
վրա, յերբ վերջինս բռնել եյինք
մոմի բոցի վրայով:

Իսկ ուր կորավ ածուխը:

Յերբ մոմը ծխում ե, ածուխը
մանրիկ ածխիկների յե վերածվում,
վորին մուր ենք ասում — ու նստում
ե առաստաղին, պատերին և շրջա-
պատղ ամեն տեսակ առարկաների
վրա:

Իսկ յերբ մոմը լավ ե վառվում,
չի ծխում — ածուխն ամբողջովին
այրվում ե:

Այրվում ե:

Իսկ ի՞նչ ե նշանակում — այր-
վում ե:

Յերկուսից մեկը. ածուխը կոր-
չում ե, անհայտանում, կամ մի ուրիշ
նյութի յե վերածվում, վորը մենք
չենք տեսնում:

Փորձենք վորսալ այդ աներեսույթ
նյութը:

Մեզ անհրաժեշտ ե ունենալ յեր-
կու անոթ — քաղցրավենիքի բան-
կան և մոմի մի կտոր: Մոմն ամ-
բացնում ենք լարի ծայրին և հեշ-
տությամբ իշեցնում բանկալի մեջ:
Վերցնենք նաև մի բաժակով
կրածուր, վորը պատրաստում ենք
այսպես. չանգցրած կրի մի կտոր
լուծում ենք ջրում և զտում ծծո-
ղականի միջոցով: Յեթե լուծույթը
պղտոր ե — ելի յենք բամում, մինչեւ
վոր թափանցիկ հեղուկ ստանանք:

Այժմ վառենք մոմը և իշեցնենք
դեպի բանկայի տակը: Մոմը կը-



վառվի, կվառվի ու կհանգչի: Հանենք, նորից վառենք ու նորից իջեցնենք. մոմն այս անդամ արագությամբ կհանգչի, կարծեսթե ջրի մեջ իջեցրինք:

Ուրեմն բանկայում այժմ մի բան կա, վոր խանգարում ե մոմի այրվելուն:

Ի՞նչ ե այդ բանը. չե՞ վոր բանկան դադարկ ե թվում մեզ:

Այժմ մի քիչ կրաջուր լցնենք բանկայի մեջ: Զուրը կպղտորվի, կսպիտակի. իսկ յերբ նույն կրաջուրն ածենք մյուս բանկայի մեջ (դատարկ), նա կմնա իր թափանցիկ վիճակում:

Նշանակում ե այն բանկայի մեջ, վրբտեղ մոմն եր վառվում, կա մի ինչ վոր աներեւութ գաղ, վորը պըղտորում ե կրաջուրը:

Գիտնականներն այս գաղն անվանել են ածխաթթու գաղ. նրանք գտել են, վոր այս գաղն ստանում ենք նաև ածուխի այլվելուց:

Այժմ մենք կարող ենք ասել, թե ուր չբացավ մոմք: Նա սկզբում

չուր և ածուխ դարձավ: Զուրը ցնկում ե, իսկ ածուխն այրվում և ածխաթթու գաղ ե դառնում:

Նույնը պատահում ենաև փայտի հետ, յերբ այրվում ե փայտը, դառնում ե ջուր և ածուխ: Ածուխն այրվում ե, թեպետ վհչ ամբողջովին. չայրված վիճակում միշտ ել քիչ քանակությամբ մնում ե վառարանի հատակին: Իսկ այրված ածուխը՝ ածխաթթու գաղը ջրի գուրշու հետ մտնում ծինելույզի մեջ: Զմեռը նկատած կլինեք ծըմսելույզից քուլա-քուլա բարձրացող սպիտակ ծուխը. սա—հենց ջրի գուրշին ե, վոր ցրտի ազդեցության տակ խտանում և կաթիներ ե դառնում: Իսկ յեթե ծուխը սև ե, նշանակում ե վառարանը ծխումե, ծխի մեջ չայրված ածուխ (մուր) շատ կա:

ԽՆՉԱՅԻ ՅԵ ՎԵՌԵՐԵՆԼ ՎԵՐՎԵԼԻՄ
ԴԹՒԹԻՄ

Զմեռ ժամանակ, յերբ վառում ենք վառարանը, նա սկսում ե իր յերգը. կարծես՝ նվազախմբի մեծ

փողն ե փչում. իսկ դռները զբըն-
դում են ու աղմկում մետաղյա
ափսեների նման:

Վ՞րտեղից ե այս աղմուկն ու
աղաղակը:

Վորակեսզի նվագափողը հնչի,
պետք ե փշել:

Իսկ վառարանի մեջ փչողն ով ե:

Այ թե ինչ յերք վառարանը վա-
ռում ենք, նրա մեջ յեղած ողը
տաքանում ե: Տաք ողն ավելի թեթև
ե: Նա վերև ե բարձանում, և նրա
տեղը բռնում ե սենյակի սառն ողը:
Այսպիսով ստացվում ե ողի հոսանք,
վորն անցնում ե վառարան՝ ներ-
քեից վերև:

Կարող եք մի այսպիսի փորձ
անել: Բացիկի կամխաղաքարտի վրա
գրեք թղթի կտորներ, այնպես վոր
յեղերքին մոտ լինեն: Մոտեցրեք
վառարանի դռան անցքերին. թղթի
կտորները մեկը մյուսի յետերց
կցատկեն դեպի վառարանի անցքը:
Ի՞նչն ե նրանց ներս քաշում:
Ողի հոսանքը, վոր սենյակից զե-
ղի վառարան և զնում և իր հետ

տանում թղթի կտորներն, այնպես,
ինչպես ջրի հոսանքը տաշեղներ ե
տանում:

Ճիշտ ե արդյոք, վոր տաքացած
ողը վերև ե բարձրանում:

Այս բանը կարող եք տեսնել սե-
փական աչքերով: Արև ժամանակ
պատուհանում զրեք վառած մոմ
կամ լամպ և դիտեցեք. կտեսնեք,
վոր պատուհանի տախտակին գծա-
գրվում ե բոցի սավերը, իսկ սրա
վրայով բարձրանում ե տաքացած
ողի հոսանքը: Բոցն ել վերև ե բարձ-
րանում տաքացած ողի ուղղու-
թյամբ:

Հիմա հասկանալի՞ յե, թե ինչու
համար են վառարանի դռներին անց-
քեր շինում:

Ողի համար:

Իսկ ինչու համար ողն անհրա-
ժեշտ ե այս գեպքում:

Վորպեսզի փայտը վառվի:

Առանց ողի, պինդ ծածկած վա-
ռարանում փայտը չի վառվի: Քա-
նի լավ ե ողի հոսանքը, քանի լավ ե
«վառարանը քաշում», այնքան ել



լավ են վառվում փայտերը։ Դուք
ել յերեկինկատած կլինեք, վոր յեղք
հոսանքը դանդաղ ե, փայտն ել
հազիվ հազ ե վառվում, կամ ծը-
խում ե։

Ինքնայեռի ներքեկի մասում անց-
քեր են շինում. հապա ասացեք —
ինչու համար են այդ անցքերը։

Ի՞նչո՞ւ Յե ԶՈՒՐԼ ՀԱՆԳՑԵՐԻՄ ԿՐԱԿը
Յեթե մոմը ջրի մեջ իջեցնենք —
կհանգչի։

Ի՞նչո՞ւ

Վորովհետև այրվելու համար ող
ե պետք, և վոչ թե ջուր։

Հենց դրա համար ել ջուրը հանգ-
ցնում ե կրակը։ Նա թույլ չի տա-
լիս, վոր ողը մոտենա այրվող առար-
կալին։

Կարելի յե ուրիշ կերպ հանգը-
նել կրակը. ծածկել վերմակով, կա-
պերտով կամ ավազով, հողով։ Շո-
րերը կամ ավազը թույլ չեն տա-
լիս, վորպեսզի ողն անցնի դեպի
կրակը. իսկ այրման համար ան-
հրաժեշտ ե ող, ավելի ճիշտ՝ ողի

բաղադրիչ մասերից մեկը՝ թթվա-
ծինը. առանց վորի այրում չի կա-
րող լինել։ Յերբ կրակը ծածկում
էնք, թթվածինը չի անցնում գեպի
այրվող առարկան, և կրակը հանգ-
չում ե։ Ահա թե ինչու հրդեհի ժա-
մանակը, յերբ գեռ նոր ե սկսվել,
պետք ե շորերով կամ հողով ծած-
կել կրակը, և նա իսկույն կհանգչի.
այսպիս են վարվում, յերբ բռնկ-
վում ե նաև մարդու շորերը, տնա-
յին իրերը և այլն։

Ի՞նչո՞ւ ՅԵՆՔ ՓՉՈՒՄ, ՅԵՐԲ ՈՒԶՈՒՄ
Ե՞նք ՀԱՆԳՑԵՐԵԼ ԼՈՒՑԿԻՆ

Այրվող լուցկին կամ մոմը յեր-
քեք ջրով չենք հանգնում. վորքը
կրակը հանգնելու համար բավա-
կան ե միայն փշել։ Լավ, բայց ին-
չու կրակը փշելուց հանգչում ե։

Վորպեսզի լուցկին վառվի, պետք
ե նա տաքանա. պետք ե լուցկին
բսել արկղի կողերին կամ դնել
վորեե տաքացրած առարկայի վրա։
Բոկ հանգչելու համար նա պետք
ե նորից սառչի։

Իսկ ի՞նչպես սառեցնել:
 Փշել—և ուրիշ վոչինչ:
 Ուրեմն մենք փչում ենք, վոր-
 պեսզի լուցկին սառչի. այս—մեկ-
 բացի այդ՝ յերբ փչում ենք, լուց-
 կուց հեռացնում ենք ողի շերտերը,
 վոր անհրաժեշտ ե այրման համար.
 Ինչպես վերեւում ասվեց՝ այրման
 համար անհրաժեշտ ե ող, իսկ առանց
 ողի (թթվածնի) այրում չի կարող
 տեղի ունենալու Յերբ կրակն ավելի
 ուժեղ ե (որինակ վառարանում,
 գետնի վրա «ոջախ» անելիս) փչե-
 լուց կրակը չի հանգչում, ընդհա-
 կառակը—բորբոքվում ե:

Ի՞նչ եք կարծում—ինչու:

ՀԱՆԵԼՈՒԿ ՎԱՐՄՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ահա և մի նոր հանելուկ:
 Վառարանը վառվում ե, իսկ կրակ
 չկա: Ուր ողն ե մտնում, այնտեղից
 ել ծուխն ե բարձրանում:
 Ի՞նչն ե սա:

Ի՞նքը—մարդն ե:

Շնչառության ժամանակ մենք
 ներշնչում ենք ող, իսկ արտաշնչում



ջուր և ածխաթթու զագ. իսկ և իսկ
 վառարանի նման:


Կարհղ եք ստուգել այս բանը:
 Փչեցեք (արտաշնչել) գդալի վրա—
 գդալը «կրանի»: Սա հենց ջուրն
 ե: Ա, ժմ ծղոտով փչեցեք կրաջրի
 մեջ. ջուրը կպղտորվի: Սա յել ած-
 խաթթու զագն ե:

Մեր բերանը թե դուռ ե, թե
 ծխնելույզ. դոնով ներս ե մտնում
 ող, իսկ ծխնելույզով դուրս են զա-
 լիս այրումից առաջացած մարմին-
 ներ:

Մեզ համար իրեւ վառելիք ե ծա-
 ռայում ուտելիքը, վորը մշակվում
 ե մեր մարմնի ներսում և այրվում.
 այս այրումից առաջացած տա-
 քությամբ պահպանվում ե մեր մար-
 մնի շերմությունը:



ԵԵՐՐՈՐԴ ԿԱՅԱՐԱՆ
ՍԵՂԱՆ ՏԵՎ. ՊԼԻՏԱ



ԽՈՀԸՆՈՅ — ԼԵԲՅՈՒՏՏՈՐԻԱ

ՃՐԹՃՐԹՈՒՄ Ե ՀՈՐ ՓԱՅՄԱՐ ՀՆՈ-
ՋՈՒՄ. ուրախ կըակը, թափառա-
շըչիկ յերաժշտի պես, սլար ե
ածում պլիտի վրա հավաքված
բնակիչներին: Եմալապատ կա-
պույտ թեյամանը վեր-վեր ե
գցում իր խուփը և նորից բրո-
նում, ցած բերում. չուգունե թա-



վան թշում ե, գողում հուզմուն-
քից. նույն իսկ աժդահա պղինձն,
իր մեծությունը մոռացած զժի
պես, պլթոլթում ե, տաք ջրով
լողացնելով իր համեստ հարկա-
նին — չուգունե կաթսային:

Յեթե հիշում եք, մեր դասա-
գրքերում կարդացած կլինեք «Խո-
հանոցը» վերնագրով հետեւյալ վա-
տանավորը.

Մի անկյունում ճրթճրթալով
Պլիտան ե հա ֆշում,
Վրան կաթսան ջրով լիքը
Քլթքլթում ե ու թշում:
Ուռած փորով ինքնա եռը
Տաք շողի յե արձակում...
Իսկ անատամ միսծոծիկը
Վոնց ե միար հա լափում...
Այստեղ տոլման ե պրթպլթում,
Այստեղ բողբաշն ե յեռում
Աննման ե խոհանոցը,
Յեզ մաքուր ե և սիրուն:

Ասում ենք — խոհանոց, բայց
չենք սխալվի, յեթե անվանենք —
Քիմիական լաբորատորիա.

Իհարկե, այստեղ, ինչպես և քի-
միական լաբորատորիայում, նյու-

թերը վերամշակվում են, մի նյու-
թից ստանում ենք մի ուրիշ բան,
վոր իսկի նման չե իր «ծնողին»...
Ինչքան բազմազան փոփոխու-
թյուններ են առաջանում այս
պղինձներում, կաթսաներում, թա-
սերում:

Հասարակ տաշտակի մեջ խմորի
գունդը կենդանանում ե, աճում
ու բարձրանում, կողքերից դուրս
ե թափվում:

Կաթսայի մեջ դրած մսի մի
կտոր, մի ժամ չանցած, այնպես
ե փոխվում, վոր չես ել ճանաչում.
Թելիկների յե բաժանվում, կարմիր
գույնը կորցնում, կծկվում, լողում
ջրի յերեսին: Պինդ ու կարծը կար-
տոֆիլը կակղում ե, փշրվում, յեթե
ուշանաս — հալվում ե բոլորովին:

Յեվ այս «հրաշքները» կտտա-
րում ե վոչ թե մի գիտնական քի-
միկոս, այլ սովորական տնտեսու-
թին՝ վեր քըշտած թևերով, գոգնոցը
կապած:

Շատ հավանական ե, վոր պլի-
տայի առաջ աշխատողը գաղափար

ել չունի այն մասին, թե ինչ ե
կատարվում այդ պղինձների և
կաթսաների մեջ: Գիտե՞ք արդյոք
նա, թե ինչ ե կատարվում, յերբ
կարտոֆիլը յեռում ե ջրում:

Տեսնենք թե ինչ ե կատարվում,
բայց նախ և առաջ մի ծանոթա-
նանք՝

Թե ինչ ե ինքը — կարտոֆիլը

կասեք — բոլորս ել գիտենք:

Վո՞չ շատ շատերը չգիտեն:

Այ, որինակ, գիտե՞ք, թե ինչից
ե բաղկացած կարտոֆիլը:

Յեթե չգիտեք, հետեւյալ փորձը
կատարեցեք.

Տրորեցեք հում կարտոֆիլն այն-
պես, վոր շփոթ դառնա, խառնե-
ցեք ջրի հետ մի ամանում, քամե-
ցեք շորով և թողեք մնա:

Ամանի տակին սպիտակ նյութի
մի շերտ կնստի:

Թափեցեք ջուրը, նստավածքը լցո-
րեք ծծողականի վրա ու թողեք՝
չորանա: Կատանաք սպիտակ փոշի:
Ի՞նչ ե այս:



Սա—ոսլայե (կրախմալ), ինչպես
ասում են՝ կարտոֆիլի ալյուր եւ:
Կարտոֆիլս իր մեջ մեծ քանա-
կությամբ ոսլայե պարունակում-
սակայն ինչո՞ւ սովորաբար մենք
չենք նկատում այս:

Վորովինետև ոսլայի հատիկները
գոյնվում են բջիջների մեջ:

ԻՆՉՈ՞Ի ՀԱԽՄ ԿՈՐՏՈՓԻԼԲ ԶԵՆ ՈՒՏՈԽՄ

Ոսլա ստանալու համար մենք
արորում ենք կարտոֆիլը. իսկ ստա-
մոքսում ինչո՞վ պիտի տրորենք:
Ստամոքսի ուժերից վեր և այդ:

Ահա թե ինչո՞ւ հում կարտոֆիլ
չեն ուտում, Կարտոֆիլը յեփելիս
բջիջների թաղանթը տաքությու-
նից պայմում եւ կ ջուրը թափան-
ցում եւ ոսլայի հատիկների մեջ,
վորոնք ուռճանում են և կակղում:

Գոլորշիով խաշած կարտոֆիլը
չոր եւ թվում, վորովինետև ջուրն
ամբողջությամբ ներծծվում եւ ոս-
լայի հատիկների մեջ և կարտո-
ֆիլը ջրից դուրս եւ գալիս չոր:

ԻՆՉՈ՞Ի ՏԱՊԵԿԸ ԿՈՐՏՈՓԻԼԻ ԿԵՎԵՎԸ ԶՈՐԱՆԱԽՄ Ե, ԻՍԿ ԽԵԶԵԺԻՆԸ՝ ՎՈԶ

Կարտոֆիլը տապակելիս անհա-
մեմատ ավելի յեւ տաքանում, քան
թե խաշելիս: Բարձր ջերմության
ազդեցության տակ կարտոֆիլի
մակերևույթին գտնված ոսլան վե-
րածվում է «ղեկստրինի», այսինքն
սոսնձանման մի նյութի, վորը
միացնում է կրախմալի հատիկները
և ստացվում եւ կարտոֆիլի կար-
մրագույն կեղելը:

Դեկստրինի սոսինձ դուք ան-
շուշա գործածած կլինեք, առանց
իմանալու, թե ինչից եւ պատրաս-
տած այն:

Այս սոսնձով, իմիջի այլոց, դե-
ղատներում կպցնում են 22երե-
սկետակները (ետիկետկա):

ԻՆՉՈ՞Ի ՊԱԼԵՅԸ ՍՊԻՏԱԿԵՆԸ ԿՈՐՃԲԱՆԱԽՄ Ե

Սպիտակեղենը տաք արդուկով
արդուկելիս, ոսլան ջերմության
ազդեցության տակ վերածվում եւ

գեկսարինի: Սպիտակեղենի մա-
կերևույթը ծածկվում ե կարծը կե-
ղեռվ, այսպես, ինչպես կարտոֆիլի
մակերևույթը:

Ուստի և ոսլայած ոճիքներն
այնքան պնդանում են, վոր ցա-
վեցնում են վիզը՝ ինչքան պինդ
լինի ոսլայի՛ լուծույթն, այնքան
ափելի կանդանա սպիտակեղենը
(թեեր, ժանյակ, սփռոց և այլն)
արդուկելուց հետո:

Ի՞նչՊԵ՞Ս և ԴԱՅԱՆՈՒՄ ՀԱՅԻ ԿԵՎԵՎԸ

Սովորական ալյուրը նույնպես
իր մեջ ոսլա յե պարունակում:
Ուստի և հացը թխելիս՝ նույնպես
ծածկվում ե կեղեռվ:

Բայց գուք համոզված եք, վոր
ալյուրի մեջ ոսլա կա. գուցեց յես
ճիշտ չեմ ասում. լավ չի լինի, վոր
ինքներդ համոզվեք այս բանում:

Վերցրեք շորի մի կտոր, մեջը
դրեք խմորի մի գնդիկ և մի բա-
ժակ ջրում լվացեք ու շարունակ
քամեցեք: Զուրը կսպիտակի ու

կաթի գույնը կստանա. Յեթե թող-
նեք, կտեսնեք, վոր նրա տակին
կստի այնպիսի մի շերտ, վոր
ստացվում եր կարտոֆիլից:
Որեմն ճիշտ ե, վոր այսուրի մեջ
սոլա կա:

Ի՞նՉՈ՞Ն ՅԵ ՀԱՅԻ ՀԱՅԱՆՈՒՄ

Մի պստիկ տոպրակի մեջ լց-
ըեք մի քիչ ալյուր և լվացեք հո-
սող ջրի (ծորակի) տակ, մինչեւ
վոր ամբողջ ոսլան գուրս գա: Տոպ-
րակի մեջ կմա կպչուն սոսնձա-
նման մի գնդիկ: Յեթե այս նյութը
մի-յերկու ժամ մնա բաց ոդում,
կանդանա և ապակու պես դյու-
րաբեկ կդառնա:

Ահա թե ինչու հացը հնանում ե.
նրա մեջ պարունակվող սոսնձնա-
նման նյութը պնդանում և փխրուն
ե գառնում:

Ի՞նՉՈ՞Ն ՅԵ ԽՄՈՒԼ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ, ՅԵՐԻ ՆՐԱ ՄԵՋ ԽԱՅ ԵՆ ԳՅՈՒՄ

Խմորը բարձրանում ե այն պատ-
ճառով, ինչ պատճառով վոր ուս-

շում ե ռետինի գնդակը, յերբ
նրա մեջ ոդ ևնք լցնում:

Միայն խմորի մեջ ռետինի փո-
խարեն սոսնձանյութ կա, իսկ ոդի
փոխարեն ածխաթթու գազ:

Յերբ տանը խմորը հունցեն, վեր-
ցրեք սի կտոր խմոր, դրեք ամանի
մեջ ու բերանը փակեցնք: Հետե-
յալ որը զգուշությունը բաց արեք
ամանը և վառած լուցկին իջեցրեք
մեջը: Լուցկին իսկույն ևեթ
կհանդի:

Ինչու:

Վորովհետեւ ամանում ածխա-
թթու գազ ե հավաքվել:

Յերբ խմորի մեջ խաշ են դնում,
առաջանում են ածխաթթու գա-
զով լի բազմաթիվ բշտիկներ: Անա-
հենց այս բշտիկներն են բարձրաց-
նում խմորը:

Իսկ վորակեղից առաջացավ այդ
գազը:

Խաշի միջոցով. նրա ամեն մի
մնկիկը — քիմիական մի փոքրիկ
գործարան ե, զոր ածխաթթու գազ
ե պատրաստում:

Ի՞նչո՞ւ ՀԵՅԻ ՓԵՓՈՒԿ ՄԵՍԼ ԺԱԿՈՏԻՆԵՐ ԱԻՆԻ

Յերբ խմորը փուռն ին դնում,
սունձանյութը չորանում, փխրուն
ե գառնում: Ածխաթթու գազը կա-
լանքից ազատվում ե, պայթեց-
նում ե թաղանթներն ու դուրս
գալիս:

Անա թե ինչու հացը փխրուն ու
բշտիկավոր ե լինում: Հացի փա-
փուկ մասի ամեն մի ծակոտին
ածխաթթու գազից առաջացած
հետքն ե:

ՀԵՅԻ ՔԵՄԻԵԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ լսեցեք հացի վողջ պատ-
մությունն սկզբից. յեթե դուք կար-
գացնել եք «Ինչու հաց չկար» պատ-
մվածքը («Շակներում», «Կարմիր
ծիլերում»). ուսւերեն կա առանձին
զրքով), յերկի կհիշեք, թե ինչպես
տղան դես ու դեն ընկափ, հարց
ու փորձ արեց, շատ շատերին
գործի հրավիրեց, մինչև վոր փակ
փուռը բացվեց և նա հաց ճարեց ու

կուշտ կերավ։ Բայց նա չհետաքր-
քրվեց, թե ինչպես թխեցին այդ
հայը։

Երան պետք եր, վոր նավթա-
հորերը նավթ տան շոգեմեքենա-
յին, սա յել յերկաթ տանի զոր-
ծարանին, գործարանում գութան-
ներ շինեն, այդ գութաններով գե-
տինը փարեն, արտում ցորեն բուս-
նի, ցորենը ջաղաց տանեն ալյուր
անեն և ալյուրից հաց թխեն։ Լավ,
բայց ինչպես են թխում այդ
հայը, — տեսնենք։

Հացթուխը (մեծ, մեքենայաց.
բած փոներում սա, ինարկե, մի
մարդու գործ չե) վերցրեց տաշ-
տակը, ջուր ածեց, աղ, խաշ, ալ-
յուր լցրեց, թևերը վեր քշտեց ու
սկսեց հունցել։ Սոսնձանյութի
պատճառով ալյուրի ցրված հատիկ-
ները միացան և ստացվեց մի մեծ
փափուկ գունդ։ Աղա ծածկեց տաշ-
տակն ու մի տաք տեղ դրեց։

Յեվ սկսվեց «քիմիանոցի» աշ-
խատանքը։ Խաշը գործի անցավ ու
սկսեց ածխաթթու գաղ պատրաս-
տակն ու մի տաք տեղ դրեց։

տել։ Բայց սոսնձանյութը ճկուն է
ու ձգվող, թույլ չի տալիս, վոր
գաղը դուրս գա։ Ինչքան ել սա
աշխատում ե աղատվել, լույս աշ-
խարհ գալ, ինչքան ել վոր ճնշում
ե իր բանտի պատերին, չի լինում,
չի կարողանում պատել սոսնձա-
նյութի տոպլրակը։

Խմորի գունդը կենդանանում է,
սկսում ե շարժվել, բարձրանում
ե հա բարձրանում, կարծես ուզում
ե տաշտից դուրս փախչել։

Ահա և խմորն ընկավ փուռը.
Ինչ փոփոխություններ են առա-
ջանում այստեղ։

Հացի յերեսը կարծրանում է.
ամենաբարձր ջերմության տակ
ուղան վերածվում ե դեկստրինի և
ստացվում ե կարծր կեղև։ Իսկ
ներսում ուղան ուռչում ե ու
փափկում։

Սոսնձանյութը չորանում է, ճաք-
ճըքում և ածխաթթու գաղին աղա-
տություն տալիս։

Յեվ թարմ հայի գուրեկան հոտը
բռնում է տունն ու բակը։

ԻՆՉՈ՞Ր ԳԵՐԵԶՈՒԹՅՈՂ ՓՐՓՐՈՒՄ Ե,
ԹԵՇՈՒՄ

Ինչպես են զարեջուր պատրաս-
տում: Գարու կամ ցորենի ծլած,
քաղցը հատիկները ջուրն են դնում
և խաշ ավելացնում: Խաշն սկսում
ե իր գործը և հատիկներից ած-
խամթու գազ հանում:

Գարեջրի փրփուրը հետևանք և
այն բշտիկների, վոր առաջանում
են ածխամթու գազից:

Ի՞՞Չ Ե ՍՈՒՊԸ

Բուլյոնի սիրահարները կտաեն,
վոր սա՝ շատ համեղ և սննդարար
կերակուր ե. մինչդեռ բուլյոնը
համարյա վոչնչով չի տարբերվում
հաստրակ ջրից:

Մի աման բուլյոնում 19 գդալ
ջուր կա և միայն 1 գդալ զանազան
նյութեր:

Ցեթե բուլյոնը յեռացնենք այս-
քան, մինչև վոր ամբողջ ջուրը գո-
լորշիանա, ամանի տակին համար-
յա վոչինչ չի մնա:




Ցեվ յեթե մի ափսե սուպը լո-
բորատորիայում վերլուծենք, կտես-
նենք, վոր բացի 19 գդալ ջրից, նա
իր մեջ պարունակում ե $\frac{1}{4}$ գդալ
ճարպ, $\frac{1}{4}$ գդալ սոսինձ (այն, իս-
կական ատաղձագործական սո-
սինձ), քիչ քանակութիւմք աղեր
(վոչ միայն սովորական աղ, այլև
ուրիշ տեսակ աղեր): Մնացածը
համեմունք ե, ալսինքն՝ համ տվող
նյութեր: Այսպես ե կոչվում մսի
բաղադրիչ մասը, վոր նրան համ
ե տալիս և յեռալիս լուծվում ե
ջրի մեջ:

Վոչ սիրայն սուպը, այլև մեր
բոլոր կերակուրներն ավելի շատ
են ջուր պարունակում, քան մեզ
թվում ե տուածին հայացքից:

Բանջարեղենն այնքան շատ ջուր
ե պարունակում, վոր չորանալուց
հետո կորցնում ե համարյա ամ-
բողջ քաշը և փետուրի պես թե-
թեանում: Մի կիլոգրամ մսի մեջ
750 գրամ ջուր կա, այսինքն՝ յե-
րեք չորորդականը ջուր ե: Նույնը
և կարտոֆիլը:

ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆՔ ՄԻՍ ԱԽՏՈՒՄ

Սուպի հարցը վերջացրինք, այժմ
անցնենք մսին։ Յեթե միսը վեր-
լուծենք, կտեսնենք, վոր սա ևս —
սուպի նման — ջրից, աղերից և
համ տվող նյութերից և բաղկա-
ցած, Բայց միսն իր մեջ պարու-
նակում և նաև մի ուրիշ նյութ,
վոր սուպի մեջ շատ չնշին քանա-
կությամբ կդանենք. սա — սպի-
տակուցն ե։

Յերբ միսը յեփվում ե՝ սպի-
տակուցի մի մասը մակարդվում ե
և փրփուրի նման վերև բարձրա-
նում, և ունարարները քամում են
այդ «քափը» և մաքրում սուպը,
վոր համեղ ու դուրեկան լինի։
Շատ իզուր. չե՞ վոր մսի սպիտա-
կուցը շատ մննդարար ե։

Առանց սպիտակուցի մենք չենք
կարող ապրել. մեր մկաններն ել՝
հորթի և կովի մսի պես համարյա
ամբողջովին ջրից ու սպիտակու-
ցից են բաղկացած։ Յեթե մենք
անկենք այնպիսի կերակուրով,

վորի մեջ սպիտակուց չկա (թե-
կուղ առատ ճարպ, շաքար և ոսլա-
լինի), վաղ թե ուշ կմեռնենք՝ մեր
սարմնի համար անհրաժեշտ կառու-
ցողական նյութի պակասից։

Ուրեմն կերակուրը յերկու տե-
սակ ե լինում. ճարպը, շաքարն ու
ոսլան — սա մեզ համար վառելիք-
ե, վոր տաքացնում ե մեր մար-
մինը և գործարկում վողջ մեքե-
նան։ Իսկ սպիտակուցն — այն գըլ-
խավոր նյութն ե, վորից կառուց-
վում ե մեր մարմինը։ Յերբ վա-
ռելիք չի լինում, հարկադրված
վառում ենք անպետք սեղանն ու
աթուը. յերբ ճարպեր չեն լինում,
կամ շաքարն ու ոսլան ե պակա-
սում, սպիտակուցներն են այրվում։
Ուրեմն սպիտակուցները — և՝ վա-
ռելիք են, և շինանյութ։ Ահա թե
ինչու մարդու համար այնքան ան-
հրաժեշտ են սպիտակուցները։

ԻՆՉՈ՞Վ Ե ԿԳՅՐԼԱԾ ՄԻՍԸ

Յեփած միսը թելիկների յե բա-
ժանվում, իսկ հում միսի թելիկ-

ներն իրար միացած են շատ ա-
մուռ:

Վորպեսզի մսից հեռացնենք
այդ սոսինձը, պետք ե յերկար
ժամանակ յեփ տանք: Այս գեպքում
թելիկները միացնող սոսնձային
նյութը հալչում ե: Յեթե այս լուծ-
վածքը սառեցնենք, կսամանանք խե-
ժի նման մի բան, վորը, յեթե չո-
րացնենք, կդառնա սովորական սո-
սինձ:

Ուրեմն միսն, ինչպես սեղանը
կամ աթոռը, ատաղձագործական
սոսնձով ե կպցրված:

Մենք ճաշում ենք. ուտում ենք
սուպ, միս, հաց, կարտոֆիլ. այժմ
մենք դիտենք, թե ինչ ե այս բո-
լորը և ինչ ոգուտ ե տալիս միսը:

ԱՐԲԱՂՋ ԺԱՅՔ ՄԻ ՇԵՒ ՄԵԶ

Աշխարհումս ամենալավ կերա-
կուրն այն ե, վորով կենդանին կե-
րակում ե իր ձագերին: Այդ կե-
րակուրը կաթն ե:

Կաթից կազմված են մարդու
և կենդանու մկանները, կաշին,

ճանկերը, վոսկորներն ու ատամ-
ները: Կաթի շնորհիվ անզոր կոր-
յունը (առյուծի ձագ) դառնում
ե հզոր գազան, վորի մոնչյունից
յեռներն ու ժայռերն են թնդում:
Հսկա կետն, ինչպես նաև փոք-
րիկ ծովախոզուկը կաթով են
անվել:

Կաթն իր մեջ պարունակում ե
այն ամենն, ինչ անհրաժեշտ ե յե-
րեխային, այսինքն՝ և ջուր, և ճարպ,
և շաքար, և սպիտակուց և
աղեր:

Ճարպը կաթի մեջ լողում ե
մանը կաթիներով: Ճարպը ջրից
թեթև ե, ուստի և բարձրանում ե
վերև ու հետզհետե հաստ շերտ
կազմում: Այս շերտը կամ սերը
հարելով, ստանում ենք կարագ:
Ճարպի մանրիկները հարվածներից
իրար են կպչում և բաժանվում
ջրից:

Դուք ինքներդ կարող եք կա-
րագ ստանալ, յեթե շահ մեջ լցնեք
կաթի սերը և յերկար ժամանակ
հարեք:



ԱՆՉՈՒԻ ՑԵ ԿԱԹՈԼ ԹԹՎՈՒՄ

Մեկ յերկու որ մնալով, կաթը
թթվում ե. սակայն կարելի յե
այնպես անել, վոր կաթը թթվի
վոչ թե մեկ-յերկու որում, այլ
յերկու վայրկյանում. Այս նպա-
տակով կաթի վրա պետք ե ավե-
լացնել մի քանի կաթիլ քացախ.
իսկույն կաթից կբաժնվի լոռը
(շոռ): Սա կաթի մեջ յեղած սպի-
տակուցն ե, վոր կազեին ե կոչ-
վում: Նա կաթի մեջ լուծված
է այնպես, ինչպես շաքարը ջրում:
Սակայն յեթե կաթի մեջ վորեն
թթու ավելացնենք, կազեինը կան-
ջատվի, և ճարպն ել իր հետ կտանի:

Սակայն չե՞ վոր կաթի մեջ վոչ-
վոք թթու չի լցնում, ապա ինչո՞ւ
յե թթվում:

Այսաեղ դեր են խաղում մանր
սունկիկները, վոր մեծ քանակու-
թյամբ գտնվում են ողում: Կաթի
մեջ ընկնելով, նրանք իրենց գործն
են սկսում — կաթի մեջ յեղած շա-
քարը կաթնաթթվի յեն վերածում:

Հենց այս թթվից ել կաթը կալբ-
վում ե, թթվում:

Վորպեսզի կաթը չթթվի, պետք
ե յեռացնել, վորից սունկիկները
վոչնչանում են:

Սակայն յերբեմն կաթը կտրվում
ե յեռացնելու ժամանակ. Նշանա-
կում ե սունկիկները մինչ այդ
արդեն թթուներ են առաջացրել
կաթի մեջ:

ՎՐԴՏԵՂԻՑ ԵՆ ՊԱՆԻ ԾԵԿՈՏԻՆԵՐԸ

Յերբ լոռը մառանում յերկար
ժամանակ պահում ենք, սունկիկ-
ների աշխատանքը շարունակվում ե,
վերջի-վերջոնա պանիր ե դառնում:

Պանիրի ծակոտիկներն, ինչպես և
հացի ծակոտիկներն առաջանում են
ածխաթթու գաղղից: Իսկ վորտեղից
ե առաջանում այդ գաղց:

Սունկիկներից:

ԱՆՉՈՒԻ ՊԵՆԻՐԸ ՅԵՐԿԱՐ ԺԱՄԵՆԱԿ ԶԻ ՓԶԱՆՈՒՄ

Վորովհետև նա ծածկված ե կե-
ղեղով, վորը պաշտպանում ե վեասա-

կար սունկիկներից և թույլ չետալիս, վոր պանիրը չորանա:

Ասում են Շվեյցարիայում սովորություն կա, վոր յերեխայի ծննդյան օրը մի մեծ կտոր պահիր են պատրաստում և վրան զրում նորածնի անունը, տարեթիվն, ամիսն ու ամսաթիվը:

Հանդիսավոր որերին պանիրը դնում են սեղանին, մի քիչ կտրում, ապա նորից պահում: Այս պանիրն «ապրում ե» իր տիրոջ հետ ծնդյան որից՝ մինչև մահը:

120 Շվեյցարական թերթերը գրեցին տարեկան պանրի մասին: Այս «պանիր-պապին» միայն վերջերս կտրտեցին ու կերան: Բանից դուրս յեկավ, վոր շատ համեղ եր:

ՄԵՐԴՆ Ի՞՞Զ ԵԲ ՈՒՏՈՒՄ ԱՆՑՑՈՒՄ

Մի ժամանակ մարդիկ չեցին իմանում հողը մշակել և միմիայն մսով եյին մնվում: Վոչ միայն վորսի մսով եյին մնվում, այլև ուտում եյին կովում գերի ընկած թշնամիներին:

Ասում են, վոր աֆրիկական մի ինչ վոր ցեղի զինվորներ կովի յեն գնում «միս, միս» բացականչյություններով:

Յերևակայեցեք, թե ինչ սարսափի կմատներ այս աղմուկը ջախ-ջախված ու նահանջող թշնամուն:

Հյուս. Ամերիկայի առաջին վերաբնակիչներից մեկը պատմում է, թե ինչպես զարմացան ընիկ վորսորդները, յերբ տեսան սպիտակների մշակած արտերը: Ահա նրանց առաջնորդներից մեկի ճառը, վորով նա դիմել ե իր ցեղակիցներին.

— Սպիտակներն ուժեղ են, վորովինետև նրանք հաց են ուտում, իսկ մենք միս ենք ուտում շարունակ: Միսն ել այնքան հաճախ չենք ճարում: Միսն ուշ ե «հասնում» (կենդանիներն ուշ են մեծանում), իսկ այս հրաշալի հատիկները, վոր սպիտակները գցում են հողի մեջ, հարյուրավոր հատիկների հետ մի քանի ամիս անց արդեն յետ են վերցվում: Միսը

Փախչում և մեղնից իր չորս վոտ-
 ներով։ Մենք նրան հետապնդում
 ենք միայն յերկու վոտքով։ Հա-
 տիկները չեն փախչում և վերց-
 նում ես այնտեղից, ուր ցանել ես։
 Չմեռը մենք սառչում ենք՝ վորսի
 յետեից ման գալով, մինչդեռ սպի-
 տակները հանգստանում են տնե-
 րում։ Ով ինչ լսում ե, թող լավ
 հասկանա. — մեր տների շուրջն
 աճող ծառերը դեռ ևս կանգուն
 կլինեն, յերբ հատիկներով սնվող
 մարդիկ կվոչչացնեն միս ուսող
 մարդկանց։

Դժվար ե ասել, թե մարդը յերբ
 ե առաջին հատիկը հողը գցել։ Յե-
 զիպտական բուրգերի վրա պատա-
 հում են քարերով հատիկներ տրո-
 րող մարդկանց նկարներ։

Մեր հացի նախահայրն այնքան
 ել նման չեր այժմյան հացին։ Սա
 մի շփոթ եր, վոր պատրաստում
 եյին ջրից ու մանրած հատիկնե-
 րից։

Յերբեմն այս շփոթը չորանում
 եր և այդ չոր բլիթները մարդիկ

գործ եյին ածում հացի փոխա-
 րեն։

Հաճախ եր պատահում, վոր այս-
 պիսի հացը մնում եր ու թթվում,
 և ավելի փուխը ու փափուկ խմոր
 դառնում։ Ով վոր գլախի յե ընկել
 այս խմորը խառնել նոր մանրած
 հատիկների հետ, — հենց նա յե յե-
 ղել հաց գտնողը։

Իսկ ինչո՞ւ յեր թթվում շփոթը։
 Վորովիետև ողից նրա մեջ եյին
 ընկնում դրոժի կամ կաթի սուն-
 կերը։

Շատ տարիներ անցան, մինչև
 վոր մարդը սովորեց հողը լավ մշա-
 կել և լավ հաց թխել։ Դեռ ևս 200
 տարի առաջ միջակ կարողության
 տեր յեվրոպացին այնպիսի հաց եր
 ուտում, վոր այժմ վոչվոք չի ուտի։
 Սովորական կարտոֆիլ նույն իսկ
 հարուստները չեյին ուտում։ Կար-
 տոֆիլի «մուտքը» Յեվրոպա այն-
 քան ել վաղուցիւ բան չե։ Այս
 պատմությունը դուք կարդացած
 կլինեք դրքերում, ուտի և յես մի-
 այն կիշեցնեմ։



Կարտոֆիլի հայրենիքը հեռավոր
ջիլին և ու Պերուն (Հար. Ամերիկա).
իսպանացիք 1534 թվին իրենց կալ-
վածքներից վոսկու և արծաթի հետ
նաև կարտոֆիլ բեռնեցին և Յեփ-
րոպա բերին. սկզբում չեյին վրա-
տահանում ուտեղ այս անծանոթ
բույսը, Միայն յերեխաներն եյին,
վոր միանգամից սիրեցին կարտո-
ֆիլը. Նա շագանակից ել համեղ
եր թվում:

Սակայն չանցավ մի քանի տաս-
նյակ տարի, և իշխանների այս կե-
րակուրն սկսեց զարդարել նաև չքա-
վորի սեղանը:

ԽՍԿ Ի՞՞ՆՉ ԵՅԻՆ ԽԾՈՒՄ ՄԱՐԴԻԿ ԸՆՅԵԱԼՈՒՄ

Հարուստ մարդիկ զինի և մեզը
եյին խմում, իսկ աղքատները—
չուր, իսկ վոչ մեկը, վոչ ել մյուսը
դադախար չունեյին թեյի կամ
սուրճի մասին.

Մի միայն 300 տարի առաջ յեփ-
րոպացիների ականջին հասավ, վոր
չինացիք և ճապոնացիք մի զար-

մանալի խմելիք են գործածում:
Ասում եյին, վոր այդ հեղուկը մարդ-
կանց կյանքը յերկարացնում եւ:

Յեկ ահա 1610 թ. թեյը Յեկ-
րոպա հասավ (իսկ Ռուսաստանում
թեյին ծանոթացան 100 տարի
անց), այն ել Յավա կղզուց՝ հոլ-
լանդացի վաճառականների շնոր-
հիկ, վորոնք սկսեցին գովել իրենց
ապրանքը: Թեյը համարում եյին
աստվածային խմելիք, խորհուրդ
եյին տալիս խմել որվա բոլոր ժա-
մերին, գիշեր թե ցերեկ, որական
40—50 բաժակ: Հոլլանդացի մի
բժիկ ամեն մի հիվանդության դեմ,
բոլոր դեղերի փոխարեն, թեյի դե-
ղատումս եր «գրում»:

Սակայն պարզվեց, վոր այս գո-
վական խոտը բոլորովին ել խոտ չե,
այլ պատրաստվում ե թեյի ծաղիկ-
ներից ու տերեններից, վոր թեյը
բոլորովին ել դեղ չի. ընդհակա-
ռակը՝ թունդ թեյին առողջության
համար կասս եւ:

Չնայած վաճառականների ջան-
քերին, թեյին սկզբում միայն հա-



դուստներն եյին խմում, վորովհետեւ
շատ թանկ եր:

Թեյից հետո լույս ընկավ սուր-
ճը: Ֆրանսիացի վաճառականները,
վորոնք յեղել եյին Տաճկաստանում
և Յեղիպտոսում, պատմում եյին մի
հրաշգեղ ծառի մասին: Այս բույսի
սերմերից թուրքերը պատրաստում
եյին մի խմելիք, վորը կոչվում եր
«կառվա» (զահվե) թե «կոփա», և
խմում եյին գինու փոխարեն: Այս
հեղուկը «փարատում ե տիսրու-
թյունը», ամրացնում ստամոքսը
և ուժ տալիս մարդու որդանիզմին:

Սուրճը մեկ ել լույս աշխարհ
յեկավ ֆրանսիայում, թագավորի
սեղանին՝ հրավիրածաշի ժամանակ:
Թագավորից հետո սկսեցին իշխան-
ներն, ապա կոմսերը, ազնվական-
ները, վաճառականները, փաստա-
բաններն ու բժիշկները: Բացվեցին
բազմաթիվ սրճարաններ, ուր մար-
դիկ նստում եյին որ ու գիշեր:
Պալատում ընդունված այդ նորու-
թյունը սովորություն («մոդա»)
դարձավ:

Սուրճը թշնամինել ել ուներ:
Վոմանք կարծում եյին, վոր տաճ-
կական սուրճը վայել չե կաթոլիկ-
ներին: Ուրիշները հավատացնում
եյին, վոր մինիստրը (Կոլբեր) սուր-
ճով այրել ե իր ստամոքսը. վոր
սուրճը կարճացնում ե կյանքը, ծա-
կոցներ և խոցեր ե առաջացնում
և այլն:

Մի դքսուհի ուղղակի հայտա-
րարեց, վոր վոչ մի գեպքում «մրա-
ջուր» չի խմի և ընտիր գինին չի
փոխի նրա հետ:

Շոկոլադն ավելի մեծ թշնամու-
թյուն առաջացրեց: Ասում եյին,
վոր շոկոլադը վոչ թե մարդու, այլ
խոզի կերակուր ե, վոր այրում ե ար-
յունը և կարող ե սպանել մարդուն:

Ճիշտ ե, հայտնի ճանապարհորդ
կորտեցու Մեքսիկայից բերած շո-
կոլադը բոլորովին նման չեր այժմ-
յան շոկոլադին: Մեքսիկացիները շո-
կոլադը պատրաստում եյին կա-
կառի, յեղիպտացորենի և պղպեղի
խառնուրդից, այն ել առանց շաքա-
րի, մինչդեռ մեզ ծանոթ շոկոլադը

պատրաստում են տրորած կակառ-
յից, վոր խառնում են շաքարի,
վանիլի և այլ դուրեկան համեմների
հետ ու մամլում:

Իսկ սուրճը, թեյն ու շոկոլադն
ոգտական են թե՛ վոչ. տեսնենք:

Թե՛ թեյը, թե՛ սուրճն այնքան ել
սննդարար չեն և վատ են ներդոր-
ծում սրտի ու նյարդերի վրա,
հոգնեցնում և գրգռում:

Շոկոլադն ու կակաոն — ընդհա-
կառակը: Սրանց մեջ սպիտակուցներ
ու ճարպեր շատ կան: Իզուր չե, վոր
քևեռային ճանապարհողներն ի-
րենց հետ մեծ քանակությամբ շո-
կոլադ են վերցնում:

Կակաոն ավելի քիչ չափով ե
ոգտակար քան շոկոլադը, վորով-
հետև կակաոն բովում են և միջից
ճարպերն անջատում:

ԲՆՉՈՎ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՄ ԵՑԻՆ

ՈՒՏՈՒՄ

Հարուստների սեղանից անպա-
կաս եյին վուկյա և արձաթյա ամա-
նեղնեն ու պիտույքները:

Ի՞նչ ասես—կար, բայց ամենա-
առվորական բանը չկար:

Դա—պատառաքաղն եր:

Զեռքով եյին ուտում, առանց
քաշվելու — հինգ մատն ուղղակի
կոխում եյին ընդհանուր ամանի մեջ:

Դանակներ շատ չկային: Դանակի
կոխարեն՝ ձեռքն ու ատամներն եյին
աշխատում: Յեղած 1—2 դանակը
ձաշին միշտ շրջում եր, ձեռքից
ձեռք անցնում:

Ափսեներ ել չկային. ափսեյի
տեղ հացի տափակ կտորներ եյին
գործածում:

Ճաշից հետո այս «ափսեները»
չների կամ աղքատների բաժին եյին
դանում:

Ընդդամենը 300 տարի յե, վոր
սկսեցին ափսեներ ու պատառա-
քաղ գործածել, այն ել վոչ թե
բոլորը, այլ միայն պալատներում եր
ընդունված:

ԱՐԱՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԱՆՆ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

1908 թ. Թովմաս Կորիատը գլո-
ւովում եր Իտալիայում: Իր որագրում

նա նկարագրում ե հին Հռոմի
տաճարների գեղեցկությունը, վե-
զուվի ահեղ վեհությունն ու ջրերով
շրջապատած պալատների ճոխու-
թյունը: Բայց այս բոլորից ավելի
Կորիատի գարմանքը շարժեց մի ու-
րիշ—չնչին բան:

Նրա որագրից մի քաղվածք բե-
րենք. — «Միս ուտելու ժամանակ
իտալացիները կեռեր են գործա-
ծում. այս կեռերը շինած են յերկա-
թից, պողպատից կամ արծաթից:
Իտալացիները յերբեք մատներով
չեն ուտում: Նրանք ասում են,
զոր ձեռքով ուտելը վնաս ե—ձեռ-
ները շատ հաճախ կեղտոտ են լի-
նում»:

Տուն վերադառնալիս Կորիատն
իր հետ վերցրեց այդ «պատառա-
քաղը»: Սա—այնքան ել նման չեր
մեր պատասաքաղին: Յերկու առամ-
ուներ, կոթը կարճ եր և ատամ-
ներից ըիչ յերկար, վերջանում եր
գնդիկով: Մի խոսքով սա ավելի
կամերտնի յեր նման, քան պա-
տառաքաղի:

Տուն հասնելով, Կորիատը վորո-
շեց իր ծանոթների ու բարեկամ-
ների առջև պարձենալ իր նոր գոր-
ծիքով: Ճաշկերույթի ժամանակ նա-
զրպանից հանեց պատառաքաղը և
սկսեց ուտել իտալացու նման:

Բոլորն իրենց հայացքն ուղղե-
ցին Կորիատի վրա: Յեվ յերբ նա
բացատրեց նոր գործիքի նպատակն
ու նշանակությունը, հյուրերը ցան-
կացան լավ զննել «ուտելու գոր-
ծիքը»: Պատառաքաղը ձեռքե ձեռք
անցավ: Կանայք հիանում եյն
նրա գեղեցկությամբ, տղամարդիկ՝
իտալացիների հնարագիտությամբ:
Բայց և այսպես, բոլորը միաձայն
վորոշեցին, վոր պատառաքաղով
ուտելն այնքան ել հարմար չե և
իտալացիները տարորինակ մար-
դիկ են:

Թուժաս Կորիատը փորձեց առար-
կել, վոր ձեռքերով ուտելը լավ չե,
ձեռքը հաճախ կեղտոտ ե լինում
և այլն: Խնչ աղմուկ բարձրացրին
վայելուչ հյուրերը, միթե պարոն
Կորիատը կարծում ե, վոր Անգլիա-

յում վոչվոք ուտելուց առաջ ձեռ-
քերը չի լվանում: Միթե բավական
չե բնության տված տասը մատը,
վոր ավելացնում եք յերկու նոր
արհեստական մատ ևս: Թող մի
փորձի՝ տեսնենք, թե ինչքան հար-
մար ե այդ նոր մատների գործա-
ծությունը:

Կորիատը ցանկացավ ցույց տալ
իր շնորհքը: Բայց կերակրի հենց
առաջին պատառը դուրս պրծավ
պատառաքաղի ծայրից և ընկավ
սփռոցին: Ծաղրն ու կատակները
տեղացին կորիատի գլխին: Նա
ստիպված եր իր հրաշալի գործիքը
գրպանը դնել:

Անցավ հիսուն տարի և Անգլիա-
յում նոր միայն կամաց-կամաց
գործողության մեջ մտավ պատա-
ռաքաղը:

Շատ առասպեկներ կան՝ թե
ինչպես են գտել կրակը, ով ե յե-
զել առաջին գարբինը և այն: Մի
առասպել ել կա այն մասին, թե
ինչու մարդիկ սկսեցին պատառա-
քաղ գործածել:

Պատմում են, վոր պատառաքաղն
սկսել են գործածել այն ժամանակ,
յերբ ժանյակներից շինած մեծ-
մեծ ոճիքներ եյին գործածում:


Այս ոճիքներն ուտելու ժամա-
նակ խանդարում եյին, սեղմում
եյին վիզն ու կզակը, կարծես թե
գլուխը գրված եր մի մեծ ափսեյի
մեջ: Այսպիսի ոճիքում թաղված
մարդու համար ավելի հարմար եր
պատառաքաղով, քան թե ձեռքով



ուտելը:

Գուցե սա հեքյաթ ե: Պատառա-
քաղը յերկան յեկավ հենց այն ժա-
մանակ, յերբ մարդիկ սկսեցին լվաց-
վել, շուտ-շուտ փոխել սպիտա-
կեղենը և այլն, այսինքն՝ յերբ մար-
դիկ ավելի մաքրասեր դարձան:

ԶՈՐՈՐԴԻ ԿԱՅԱՐԱՆ
ԽՈՀԱՆՈՑԻ ԴԱՐԱԿ



ՅԱԹ ԱՄԱՆ—ՅԱԹ ՀԱՆԵԼՈՒԿ

Չեք ձանձրացել, չե՞—սենյակում ճանապարհորդելուց՝ լվացարնից—վառարան, վառարանից—սեղան:

Սեղանից դեպի պահարան կամ խոհանացային դարակ—ստ կլինի մեր չորրորդ կայարանը:

Ինչպես բոլոր ճանապարհորդներն են անում, մենք ել նույնը կանք. դիտենք շրջապատը և ինչ



վոր տեսնենք — գրենք մեր որագրում:

Յերկու պղինձ: Թիթեղյա բանկա. թիթեղյա բեյտման: Չուզունե կարսա: Պղինձե թույլ: Սպիտակ մեծ կարսա:

Այս ե այն ամենը, ինչ վոր գարսած ե գարակին. յոթ սման, յոթ հանելուկ:

— Հանելուկ, — կասեք դուք: Միթե պղինձն ու կաթսան կարող են հանելուկ լինել:

Այն, հանելուկ են, հապա ի՞նչ եյթ կարծում:

Ասում եք—պղինձն կաթսաներ են: Դե, ասացեք՝ ինչու տարբեր գույնի յեն այդ կաթսաները—մեկը՝ կարմիր, մյօւսը դեղին: Իսկ յերկուսի ներսն ել սպիտակ ե: Ո. թեմն ի՞նչ ե, կարծում եք պղինձը յերեք գույնի՞ յե լինում—սպիտակ, կարմիր և դեղին:

Կամ թե չե ասացեք՝ չի՞ կարող արգյոք փոքր կաթսան մեծից ծանր լինել, յեթե նրանց կողքերն ու տակը իրար հափառ են և միհ-

նույն ծանրությունն ունեն: Գուցե
կասկածում եք: Ապա վերցրեք սպի-
տակ կաթսան: Նա յերեք անգամ
մեծ ե պղինձից, սակայն յերեք ան-
գամ թեթև ե:

Ինչու:

Վորովհետև շինված ե շատ թեթև
մետաղից՝ ալյումինից:

Կաթսայի կողքին դրած ե կավե
կճուճը, վորն այսքան կոշտ ու կո-
պես ե յերկում, սակայն յերկում
ել ազգակիցներ են:

Կամ թե չե՛ վերցրեք թեյամանն
ու բանկան: Յերկում ել թիթե-
ղից են: Իսկ Բնչ ե թիթեղը: Բնչ
տարբերություն կա յերկաթի ու
թիթեղի միջև:

Յեկ վերջապես չուգունե թասր:
Ի՞նչ եք կարծում, կոտրվնեմ ե, թե՝
վոչ. կարծես թե՛ վնչ: Չե՛ վոր չու-
գունը — ապակի չե: Մինչդեռ չու-
գունն ել ե կոտրվում. բավական ե
միայն մի պինդ թխկացնեք մուրճով:

Ահա թե ինչու ասում ենք՝ ամեն
մի աման և ամեն մի բան — հանե-
լուկի յե նման:

Ի՞նչո՞ւ Մի իր ժի՞նմիլ Են Մի Նօմի-
թիչ, ՄՅԱԽՍՆ ՈՒՐԻՑ ՆՅՈՒԹԹԻՑ

Այս յոթ ամանները տարբեր նյու-
թերից են շինված: Իսկ չի կարելի
արդյոք միևնույն նյութից շինել
այս բոլորը: Յերբեմն կարելի յե:
կաթսան, որինակ, կարելի յե և
պղնձից պատրաստել և չուգունից:
Թեյամանները լինում են թե թի-
թեղից և թե պղնձից: Իսկ լսել
եք արդյոք չուգունե և թիթեղյա
կրակախառնիչի մասին: Իհարկե
վնչ թիթեղյա կրակախառնիչը կծո-
վեր, իսկ չուգունե կրակախառնիչը՝
փշուր-փշուր կլիներ վառարանի
պինդ պատերին դիպչելուց:

Գաղանիքը նրանումն ե, վոր ա-
մեն մի նյութ տարբեր հատկու-
թյուն ունի: Մի նյութ թթվուտից
(թթու) ե վախենում, մյուսը —
ջրից, յերրորդն ուզում ե, վոր հետն
զգուշությամբ վարվեն, չորրորդը
չի վախենում հարվածներից և այն:
Յերբ մի իր են պատրաստում, պետք
է նախատեսեն, թե Բնչպես են վար-

վելու նրա հետ— հանգի՞ստ են թող-
նելու նրան, թե հենց առաջին որ-
վանից թակելու յեն՝ ինչով պա-
տահի. ջրի՞ թե թթվի հետ ե գործ
ունենալու և այլն, և այլն:

Հենց այս նկատառութներով ե,
վոր իրեր պատրաստելիս ընտրում
են այս կամ այն նյութը:

ՎՈՐՆ Ե ԱՄԵՆԱԱՄՈՒՐ ՆՅՈՒԹԸ ՅԵՎ
ՎՈՐՆ Ե ԱՄԵՆԻՑ ԱՆՀԱՍՏԱԾԸ

Յերկաթը մենք համարում ենք
ամենաամուր և հաստատ նյութ:
Իզուր չե, վոր հոյակապ կամուրջ-
ներն ու կայարանները մեծ մա-
սամբ յերկաթից են շինում: Բայց
այս կայուն ու հաստատ նյութը
(յերկաթը) միևնույն ժամանակ
ամենաամնկայունն ե: Հոյակապ յեր-
կաթե կամուրջը, վոր չի վախենում
ու չի ծովում հարյուրավոր բեռ-
նած վագոնների ծանրության տակ,
վախենում ե խոնավությունից,
անձրեից ու մառախուզից:

Ինչքան ողի մեջ շատ ե խոնա-
փություն լինում, այնքան հեշտու-

թյամբ ե յերկաթը ժանգից փշա-
նում: Ժանգը մի հիվանդություն
ե, վորն աննկատելի կերպով քայ-
քայում ե յերկաթե ամենակայուն
կառուցվածքները:

Ահա թե ինչու արքան հազվա-
գյուտ են հին ժամանակներից մնա-
ցած յերկաթե իրերը: Ավելի հեշտ
ե գտնել վոսկյա ապարանջան ու
մատանի, վորը կրել ե յերբեցեցեց յե-
գիպտական փարավոններից մեկը,
քան թե նրա բազմաթիվ հպատակ-
ներից մեկն ու մեկի յերկաթե
մանգաղը:

Շատ հավանական ե, վոր մի
քանի դար հետո մեր այժմյան քա-
ղաքների ավերակների մեջ մեր
հետնորդները հետքն անգամ՝ չգտ-
նեն մեր ժամանակի յերկաթե կա-
ռուցվածքների: Յերկաթները կժան-
գուավեն, կքայքայվեն այնպես, ինչ-
պես այն մարդկանց վոսկորները,
վորոնք պատրաստել են այդ բոլորը:

Սա ի՞նչ սոսկալի հիվանդություն
ե. միթե վոչ մի կերպ չի կարելի
խուսափել նրանից:

ԽՆԻՐԻ ՅԵՐԱՌՈՒԹԸ ԺԱՆԴԱՌՈՒՄ է

Ի՞նչ կպատահի, յեթե դանակն
ու պատառաքաղը լվանալուց հետո
լավ չսրբենք, չչորացնենք:
Կժանգոտվեն:

Այ թե ինչ—ուրեմն յերկաթը
ժանգոտում ե խոնավությունից:

Մի անգամ ջրասույզները ծովի
հատակում հանդիպեցին մի նավի,
վորը սուզվել եր 150 տարի առաջ:
Նավի տախտակամածի վրա տեսան
յերկաթե ոռումբեր, վորոնք ժանգից
այնքան եյին քայքայվել վոր կա-
րելի յեր դանակով կտրել: Այ թե
ինչ որի յեր դցել նրանց ջուրը—
խոնավությունը:

Իսկ յերկաթն ի՞նչպես պաշտ-
պանենք խոնավությունից:

Պետք ե լավ սրբել, ցամաքեցնել:
Բայց կան և այնպիսի իրեր,
վոր անհնար ե միշտ չոր դրու-
թյամբ պահել. որինակ՝ թեյամանն
ու դույլեր միշտ թաց են լինում:
Կտորի թիթեղներն ավելի դժվար
ե պաշտպանել խոնավությունից,

հո անձրեկց հետո չես կարող սրբ-
բել, ցամաքեցնել:

Նույն իսկ չոր յեղանակին յեր-
կաթը ժանգոտվում ե, վորովինեան
ողի մեջ միշտ ել խոնավությունը
կա: Ողն ամեն ինչ չորացնում ե,
սակայն ինը չոր չե: Նա ագահու-
թյամբ ամեն ինչից իր մեջն ե
ծծում խոնավությունը—նոր սրբած
հատակից, թաց սավաններից, անձ-
րեկց առաջացած լճակներից և այլն:

Յերկաթը ժանգոտելուց պաշտ-
պանելու միակ միջոցն ե—ծածկել
նրան մի ուրիշ նյութի շերտով,
վորն արգելք ե դառնում խոնա-
վության անցկացման: Կարելի յե-
յերկաթը ծածկել վորեւ յուզով,
որինակ՝ ձիթայուզով: Դրանով յուզը
կպաշտպաներ յերկաթին՝ ջրից և
թույլ չեր տա նրան ժանգոտելու:

Բայց առհասարակ ուրիշ կերպ
են վարփում: Յուղի փոխարեն վեր-
ցնում են յուղաներկ. այսինքն՝ ողի-
փով խառված ներկ—յեփած յու-
զով, վորը զանազանվում ե հում
յուղից նրանով, վոր արագ ե չո-

Քանում: Յերկաթի վրաներկի շերտը
չորանում եւ և ամրանում: Նման
ամուր շերտը, իհարկե, շատ յեր-
կար և ավելի լավ կժնա յերկաթի
վրա, քան ջրալի յուղը:

Այս միջոցառումը լավ եւ տների
տանիքների, նույնիսկ գույլերի հա-
մար: Բայց թեյամանների համար
նա անպետք եւ: Չե վոր յեռացնե-
լիս ներկը պոկվում եւ: Ուրեմն բնչ-
պես ազատել թեյամանը ժանգոտ-
վելուց:

Ի՞նչո՞ի Թիթեգն Ավելի Քիշ ե
ՓԱՆԴԱՏԱՒՄ ՔԵՆ ՍԱՎՈՐԸՆԵՆ ՑԵՐԿՎԹՔ

Յերկաթն ու շոկոլադը վորոշ
նմանություն ունեն: Ինչպես վոր
շոկոլադը ծածկում են անպի բա-
րակ թերթերով, այնպես ել յեր-
կաթը հաճախ անագում են (կլե-
կել) — ժանգից պաշտպանում են
անպի բարակ շերտով: Ստացվում
է սպիտակ թիթեգ, վորից շինում
են շաքարեղենի բանկաներ, պահա-
ծոների (կոնսերվ) տուփեր, եժան
թեյամաններ և այլն:

Անագը հրաշալի կերպով յերկաթը
պաշտպանում եւ ժանգից և, վոր
գլխավորն ե, թթուներից: Թթու-
ներն ավելի ուժեղ կերպով են քայ-
քայվում յերկաթը, քան ժանգը,
Դուք յերեխ նկատած կլինեք, թե
ինչպես արագ կերպով սև բծերով
ծածկվում եւ դանակը, յերը թթու-
բան ենք կտրում (թթու դրած
վարունգ, կիտրոն և այլն): Այս
նշանակում ե, վոր թթուն «կերել
ե» յերկաթը: Անազն ավելի դի-
մացկուն ե: Նրան կարող են «ու-
տել» միայն շատ ուժեղ (ուտիչի)՝
թթուները:

Յեթե դուք դիտեք թթու մրգե-
րից պատրաստած կոմպոտի տուփը,
կտեսնեք, վոր յերկաթը ժանգոտել
և այնտեղ, վորտեղ քերվածք կա:

Փոքր առարկաները կարելի յե-
ծածկել անագով (կլեկել). բայց
խոմ չի կարելի, որինակ՝ տանիքը
կլեկել: Այդքան անագ գործածելը
շատ թանկ կնստեր: Տանիքի թիթեգը
ծածկում են ավելի եժան նյու-
թով—ցինկով:

Յինկապատ յերկաթն ավելի յե
դիմանում, քան կլայեկածը:

Ուրեմն ինչու ցինկով չեն ողա-
տում կաթսաներն ու պղինձները:

Պարզ ե. Ջրից չվախեցող ցինկը
շատ հեշտությամբ ե փշանում
թթուներից: Այս գեպքում առա-
ջացած ցինկի աղերը շատ թունա-
վոր են: Ցինկե ամանում կերակուր
պատրաստելն ու պահելը շատ վան-
գավոր ե: Ուրիշ բան ե ցինկե գույ-
լը, տաշտակը կամ լողարանը վոր
կարելի յե պատրաստել թե ցինկից
և թե ցինկապատ թիթեղից:

Նույն իսկ ներկած կամ այլ մե-
տաղով ծածկած յերկաթը ինամք
ե պահանջում: Տանիքները պետք
ե ժամանակ առ ժամանակ ներկել,
իսկ ժանգուտած ու մաշված տե-
ղերը փոխել—կարկատել:

Մարդ յերկաթի մասին պետք ե
հոգա այնպես, ինչպես հոգում
են կենդանի երակի մասին. պետք
ե պաշտամանել նրան հիվանդու-
թյունից — ժանգից, վոր մետաղի
համար մահացու յե:

Ենջի՞ն են օրննօն Յերկաթի իրերը

Ի՞նչպես թե՝ ինչից իհարկե
յերկաթից: Այս սխալվեցիք: Յեր-
կաթե բոլոր իրերը՝ պատառաքաղը,
մեխը, պայտերը, կրակախառնիչը
և այլն—յերկաթից չեն շինած:

Ավելի ճիշտ՝ շինած են վոչ թե
միայն յերկաթից, այլ յերկաթի
ձուլվածքից՝ ածուխի կամ այլ նյու-
թերի խառնուրդից:

Խառնորդներ չպարունակող մա-
քուր յերկաթն այնքան թանկ արժե,
վոր հասարակ կրակախառնիչը կար-
ժենար մի քանի տասնյակ ոռու-
թիներ:

Յեկ այդ կրակախառնիչը շատ
ավելի անպետք կլիներ, քան մեզ
ծանոթ՝ սովորական կրակախառ-
նիչը:

Մաքուր յերկաթը շատ փափուկե:
Սրանից պատրաստած կրակա-
խառնիչը շատ հեշտությամբ կծրո-
վեր, մեխը չեր մտնի պատի մեջ,
իսկ դանակը պետք կդար միայն
թուղթ կտրելու համար:

Մաքուր յերկաթն այնքան փա-
փուկ ե և այնպես ձգվում, զոր
նրանից հետությամբ կարելի յե-
պատրաստել «յերկաթե թուղթ»,
զորը ծխախոտի թղթից թեթև ու-
րաբակ ե:

Մեր սովորական յերկաթը միշտ
իր մեջ խառնուրդ ե պարունակում:
Իհարկե՝ ամեն մի խառնուրդից
յերկաթը չի լավաճառ: Ծծումբն,
որինակ, վչացնում ե, ավելի փրխ-
րուն ե դարձնում: Յերկաթի լա-
վագույն ուղեկիցն ու բարեկամն
ածուխն ե: Յերկաթի մեջ համար-
յա միշտ ածուխ ելինում:

Իսկ ինչպես ե ածուխն այնտեղ
ընկնում:

Այ թե ինչպես:
Յերկաթն ստանում ենք հանքից,
վորը գտնվում ե — զետնի տակ:
Յերկաթն այդ հանքից զատելու
համար պետք ե այդ հանքը շիկաց-
նենք մեծ հնոցներում, ուր հանքի
հետ ածուխ ենք դարսում: Վառա-
րանը ինքնայեռի դեր ե խաղում,
վերեից հանք ու ածուխ են լցնում,

իսկ ներքեմից ողն ե անցնում—
ողամղիչ մեքենայով կամ պոմպով:
Ածուխը շիկանում ե մինչև սպի-
տակելն ու այրվում: Իսկ յերկաթը
հալվում ե ու հանքից բաժանվե-
լով ցած հոսում դեպի վառարանի
հատակը:

Սակայն հալած տաք յերկաթի
մեջ ածուխը լուծվում ե այնպես,
ինչպես շաքարը՝ տաք ջրում: Այս
խառնուրդը (յերկաթի ու ածուխի)
կոչվում է չուգուն: Իր կյանքի ա-
ռաջին որվանից յերկաթը խառն ե
յեղել ածուխի հետ:

Ածուխի մի մասը կարելի յե-
այրել, յեթե հալած չուգունի մի-
ջուկ որ անցկացնենք: Հենց այսպես
չուգունից յերկաթ ու պողպատ են
ստանում:

Ի՞՞ՉՈ՞Ի ԶԱԽԱՌԻՆԻ ՆՄԵՆ ԶԵՐԿԱ-
ԹԻՆ, ԻՄԿ ՅԵՐԿԱԹԸ՝ ՊՈՂՊԱՏԻՆ

Յերկաթի բոլոր հատկություն-
ները կախված են այն բանից, թե
ինչ քանակությամբ ածուխ կա-
նբա մեջ:

ՅԵԹԵ իրար հետ համեմատենք
յերկաթե կրակախառնիչը, պող-
պատե դանակն ու չուգունե կաթ-
սան, մեզ կթվա, թե նրանք դա-
նազան նյութերից են շինած—
այնքան տարբեր են իրարից:

ՅԵՐԿԱԹԵ կրակախառնիչն ար-
տաքուստ անձոռնի յե, կոշտ ու
կոպիտ, թեփուկներով ծածկված:
Նա ծովում ե, իսկ ինքն իրան չի
ուղղվում: Հարվածներից չի կոտր-
վում և ծանր աշխատանքից չի վա-
խենում, հեշտությամբ տակն ու
վրա յե անում փայտն ու ածուխը:

Պողպատե դանակը գեղեցիկ ե,
սուր և փայլուն: ՅԵԹԵ ծովում ել
ե, ինքն իրան ուղղվում ե, վորով-
հետեւ առաձգական ե: Իսկ յեթե
ուժեղ կերպով ծոենք, կոտրվի:
ՅԵԹԵ կրակախառնիչի փոխարեն
դանակը գործածենք, նա փշուր-
փշուր կլինի: Իսկ իր գըրծում ան-
փոխարինելի յե—կարում ե, ծա-
կում, տաշում և այլն:

ՉՈՒԳՈՒՆԵ թասը գորշ ե, հա-
մարյա թե սե ե՝ նրա մեջ յեղած

խառնուրդի՝ ածուխի պատճառով:
Փխրուն ե. յեթե մուրճով խփենք,
կփշըի: Փայտերը տակն ու վրա
անելն ու տաշեղներ ծակելլ նրա
գործը չե: Իսկ ճաշ յեփելում վար-
պետ ե, գլուխ կհանի:

Ահա այս յերեք իրերը տարբեր
ձևով են շինած:

Կրակախառնիչը շինած ե մի
կտոր շիկացած յերկաթից: Կառ-
կարմիր յերկաթն այնքան փափ-
կանում ե, վոր կարելի յե կոփել
և մուրճի հարվածներով ցանկա-
ցած ձեւը տալ:

Դանակն ել ե կոփած, բայց հետո
ամրացրել են, «յեռացրել», այ-
սինքն՝ շիկացրած վիճակում սառը
ջրի մեջ են կոփել: Այսպիսով պող-
պատն ավելի յե ամրանում:

ՉՈՒԳՈՒՆԵ չի կոփվում: Շատ տա-
քանալուց նա հալվում ե և միան-
գամից հեղուկ դառնում: ՅԵՐԿԱԹՆ
ու պողպատն այլ հատկություն
ունեն— հալվելուց առաջ փափկում
են: Այս վիճակում կարելի յե նը-
րանց հետ վարվել՝ ինչպես ցան-

կանաս—կոել, ձեավորել, ձողեր
պատրաստել և այլն:

Չուգունե թասը չեն կոել, այլ
ձուլել են: Հալած չուգունը հողից
շինած կաղապարների մեջ են լըց-
րել և թողել են, վոր սառչի:

Այս տարբերությունն առաջա-
նում է ածուխից, վորը յերկաթի
մեջ պարունակվում է քիչ չափով,
պողպատի մեջ ավելի չափով, իսկ
չուգունի մեջ ամենից շատ:

Դուք կարող եք հեշտությամբ
պարզել, թե ինչ քանակությամբ
ածուխ է պարունակում այն պող-
պատը, վորից շինված է ձեր դա-
նակը:

Դանակը տվեք սրողին և հե-
տեւցեք, թե ինչպիսի կայծեր են
թափում, յերբ դանակը քավում է
սրիչին: Յեթե կայծերը ծառի պես
ճյուղավորվեն, նշանակում է, վոր
ածուխը շատ ե: Քանի շատ լինեն
այսպիսի ճյուղավորումները, կնշա-
նակի այնքան շատ և ածուխի քա-
նակը: Յեթե կայծերը կրակե գծե-
րով են տարածվում առանց ճյու-

ղավորումների, նշանակում ե դա-
նակը շինած ե վոչ թե պողպա-
տից, այլ յերկաթից:

Այսպիսով, շատ անգամ հեշտ
միջոցներով կարող ենք պարզել,
թե ինչից ե շինած այս կամ այն
առարկան:

ՀԻԼԱՆԻ ԿՈՇԱՆԵՐ

Անագը, վորով յերկաթը պաշտ-
պանվում է ժանդից—յերբեմն ինքն
ել և հիվանդանում: Այս հիվան-
դությունը ժանտախտի նման տա-
րածվում է և վարակում շուրջը
գտնված անագե իրերը:

Մի այսպիսի համաճարակ տեղի
ունեցավ Լենինգրադում, մեզնից
70 տարի առաջ: Պահեստներում
դարսած զինվորական կոճակների
վրա ինչ վոր կապկածելի ցան ա-
ռաջացավ: Շուտով բոլոր կոճակ-
ները մութ բծերով ծածկվեցին:
Մարդիկ վախեցան. վոչոք չեր
իմանում, թե ինչից ե առաջացել
այս հիվանդ կոճակները չկարո-
ղացան փրկվել. նրանք մարդկանց

աչքի առաջ քայքայվում եյին ու
մոխրագույն փոշի դառնում:

Գիտնականները յերկար ժամա-
նակ գլուխ եյին կոտրում այս տա-
րորինակ հիվանդությունը պարզե-
լու համար: Վերջիվերջո պարզվեց,
վոր անագե կոճակները հիվանդա-
ցել են մրսելուց: Ցուրտ ձմեռ եր,
չերմությունը յերկար ժամանակ
մինուս 20 աստիճանի յեր հաս-
նում: Պահեստները չեյին տաքաց-
նում, վորովինետե վոչոք չգիտեր,
վոր անագը վախենում ե ցրտից:
Պարզվեց, վոր անագը յերկու տե-
սակ ե լինում. փոշենման և այն
վիճակում, վոր մենք գիտենք: Սա—
նման ե ածուխին, վորը յերեք վի-
ճակում ե լինում—սովորական ա-
ծուխ, գրաֆիդ և ալմաստ: Քսան
աստիճանից ցածր ցրտության
դեպքում անագը փոշիանում ե:
Նախկին դրությունը վերականգ-
նելու համար պետք ե նրա վրա
յեռացրած ջուր ածել:

Սակայն միայն մրսելը բավա-
կան չե. անագի հիվանդության

պատճառը նաև վարակն ե: Յեթե
անագի փոշու միայն մի հատիկ
ընկնի մրսած կոճակի վրա—հի-
վանդությունն անխուսափելի կը-
լինի:

Ներկայումս գտել են, վոր ու-
րիշ մետաղներն ել են ժանտախ-
տով հիվանդանում, սակայն նրանց
մրսեցնելն ավելի դժվար ե:

ԳԵՐԻՆ ՊՊԻՆՉ ԼԻՆՈՒՄ Ե,
ԹԵՇ ՎՈԶ

Խոսեցինք յերկաթի, պողպատի
և չուգունի մասին ու բոլորովին
մոռացանք պղնձե կաթսան: Նա
շինած ե կարմիր պղնձից, ուղղակի
կարելի յե ասել պղնձից, վորով-
հետեւ ուրիշ գույնի պղնձ չի լի-
նում: Շատ հաճախ խոսում են նաև
դեղին պղնձի մասին: Սակայն դե-
ղին պղնձը պղնձ չե, այլ—ա-
րույր, այսինքն՝ պղնձի ու ցինկի
խառնուրդ, սա այն արույրն ե,
վորից պատրաստում են դների
բռնակներ: Պղինձն արույրում կազ-
մում ե կես մասը, յերբեմն ել յեր-

կու յերբորդ մասը: Խնչքան շատ է
ցինկն, այնքան ավելի բաց գույնի
յե լինում արույրը: Յեթե ցինկը
կեսից ավելի յե, արույրը համար-
յա սպիտակ ե լինում:

Կաթսաները սիրում են մաքրու-
թյուն և կարգ-կանոն: Զմաքրելու
գեղքում կաթսան ծածկվում է
գորշ կամ կանաչ շերտով: Սրան
մենք կանվանեյինք պղնձի ժանդ,
յեթե ինկատի չունենայինք պղնձի
ու յերկաթի միջև յեղած տարբե-
րությունը:

Յերկաթը ժանդուռում է ամ-
բողջությամբ, ինկ պղինձը—միայն
յերեանց: Ժանդի այս շերտի շը-
նորհիլ պղինձը պաշտպանվում է
քայքայվելուց, ճիշտ այնպես, ինչ-
պես ներկի շերտը:

Ահա թե ինչո՞ւ բրոնզե արձան-
ները հասել են մինչև մեր որերը.
Կանաչ զգեստը դարերի ընթաց-
քում այդ իրերը պաշտպանել է
քայքայումից:

Պղնձի դրամները շատ շուտ են
ժանդուռում միայն դրսից: Նրանց

կարելի յե թարմացնել, յեթե ա-
նուշագրասպիրտի (հասատար-
հան ուսում) մեջ դնենք: Ժանդը
լուծվում է, սպիրտը ներկվում կա-
պույտ գույնով, իսկ դրամն ստա-
նում մաքրուր տեսք:

Արույրը—պղնձի ու ցինկի խառ-
նուրդ ե և ավելի դանդաղ է ժան-
դուռում, քան թե մաքրուր պը-
ղինձը:

Հապա դիտենք կաթսայի ներսը.
Նա ներսից այնպես չե, ինչպես
դրսից—վոչ թե կարմիր ե, ալ
սպիտակ: Սա մեզ ծանոթ «կլա-
յնկն» ե, վորով պղինձը պաշտ-
պանվում է կերակրի մեջ յեղած
թթուներից ու աղերից: Թթու և
աղի կերակուրն «ուտում ե» պը-
ղինձի ամանները: Ստացվում են
պղնձի աղեր, վորոնք ամենաու-
ժեղ թույնի չափ վտանգավոր են
մարդու համար:

Ուրեմն կլայեկի շնորհիվ վոչ
միայն պղինձն ե պաշտպանվում
կերակրից, այլ և կերակուրը՝ պը-
ղինձից:

ԱՆՉԵՐ ԵՆ ՊԱՏՐՇՍՑՈՒԹ ԿԵԼԻՑ

Դժվար ե յենթազրել, վոր ամառնեղենի խանութներում և շուկայում դարսած, վառ գույներով նըկարագարդված բազմաթիվ ծաղկամաններն ու թասերը պատրաստված են ամենահասարակ կավից, այն կավից, վոր շատ հաճախ ձանձրացնում ե մեզ, կպչելով մեր վոտներին:

Յեվ վոչ միայն ծաղկամաններ ու թասեր. ուրիշ ինչ ասես չեն պատրաստում կավից—աղյուս և ձենապակյա արձաններ, ափսեներ, լվացքի լեղակ, ցեմենտ, ներկեր... բայց ամենից ուշագրավն այն ե, վոր կավս իր մեջ ալյումին և պարունակում:

Ալյումինի՝ այս թեթև սպիտակ մետաղի մասին գիտեյին միայն գիտնականներն, իսկ այժմ ամեն մի խոհանոցում կդտնես ալյումինի ամաններ; Յեվ տարորինակ ել չե. չե վոր ալյումինը չի ժանդում յերկաթի նման և չի փր-

չանում թթու կերակրից: Նա վախենում ե սապոնից և սուլայից, բայց սա այնքան ել մեծ դժբախտություն չե:

Ալյումինը շատ հաճախ կոչվում ե «կավե արծաթ», թեպետ արծաթին այնքան ել նման չե: Նրա սպիտակությունը շատ շուտ անցնում ե, և նա գորշանում ե, վորովհետև ողի ազդեցության տակ ծածկվում ե բարակ շերտով, վորնիր հերթին պաշտպանում ե ավելի շատ փշանալուց: Այս շերտն անվտանգ ե և վոչ մի նմանություն չունի պղնձի ժանդին:

Ալյումինից շինած իրերը չեն կարող միշտ գեղեցիկ ու փայլուն ննալ:

Սակայն նա մի հատկություն ունի, վորից զուրկ են արծաթը, վոսկին, պողպատը: Նա շատ թեթև ե, յերեք անգամ ավելի թեթև ե յերկաթից: Սա շատ կարևոր հանգամանք ե, վորովհետև ալյումինից կառուցում են աերոպլաններ, վորոնք ըստ հնարավորության

պիտի թեթև լինեն: Այսումինե
խառնուրդը զանազան մետաղների
հետ տալիս ե շատ արժեքավոր
ձուլվածքներ: Այսումինի, պղնձի,
մագնիի * և մարգանեցի ** խառ-
նուրդը (դյուրայումին) յերեք ան-
գամ ավելի թեթև ե նույն ամրու-
թյան պողպատից: Այսումինն ըս-
տացվում ե նաև այլ հանքերից—
բոքսիտից և կրիոլիտից, վորովհե-
տև ավելի եժան ե նստում, քան
թե կավից պատրաստելը:

Ճենապակին (Փարֆոր) պատ-
րաստում են վոչ թե մեզ ծանոթ
կավից, այլ ստանում են կառի-
նից, փորն ամենամաքուր սպիտակ
և հազվագյուտ կավս ե: Մեզ հայտ-
նի՝ աղյուսի կամս իր մեջ պա-
րունակում ե շատ խառնուրդներ,
վորոնք շատ հեշտ ե կավից ան-
ջատել:

Յեթե մի կտոր կավ գցենք ջրով
լի բաժակի մեջ ու խառնենք, ծանր
մասերը կնստեն տակը, իսկ կավը

* Մագնիզում.

** Մանգան:

կմնա ջրի մեջ նրան պղտոր տեսք
տալով: Այս պղտոր հեղուկն ա-
ծենք մի ուրիշ բաժակի մեջ: Կավի
թեթև մասնիկները կնստեն հատա-
կին՝ բարակ շերտով, իսկ ջուրը
հետզհետե կստանա թափանցիկ
տեսք: Մյուս բաժակում մենք ու-
նենք գույնզգույն քարերի, կրա-
քարի ու ավագի կոլեկցիա:

Այս յերկու բաժակում առաջա-
ցավ այն, ինչ վոր կատարվում ե
բնության մեջ՝ անհիշելի ժամա-
նակներից սկսած: Հոկայական լեռ-
ները հեղեղների ուժով փշրվում են,
կավ ու ավագ դառնում: Քարերն
ու ավագն ավելի շուտ են նստում
գետերի ափերին ու հատակին,
իսկ կամս ու բարակ տավազը նրա-
ստում են այնտեղ, ուր գետն ավելի
հանդարտ ե հոսում: Այսպիսով
գետի հատակը ծածկվում ե կավի
շերտով, Գետը չորանում ե կամ
փոխում իր հունը, մինչդեռ կավի
շերտը մնում ե: Կավի մեջ լինում
են նաև յերկաթի մասեր (ժանդ),
վոր կավին դեղին կամ կարմիր

գույն ե տալիս: Ահա թե ինչու
աղյումները գունավոր են լինում,
թեպետ վոչոք չի ներկում: Ընդ-
հակառակը—կավից են ներկ պատ-
րաստում: Մեզ ծանոթ ներկը—
ոխրան (ոքրա) վոչ այլ ինչ ե, յե-
թե վոչ դեղին կամ կարմիր կավ:
Համեմատեցեք կավը և աղյուսը:
Կավը փխրուն ե, կակուզ: Աղյուսը
կարծր ե, ամուր: Կավը ջրից թըրջ-
վում ե, խմոր դառնում: աղյուսը
ջրից չի փոփոխվում: Կավին կա-
րող ես ցանկացած ձև տալ—ծե-
փել, տրոբել, յերկարացնել: Աղյու-
սի ձեզ չես կարող փոխել—շատ-
շատ կտոր-կտոր կանես:

Այս տարրերությունը լավ հաս-
կանալու համար ինքներս փորձենք
պատրաստել խոհանոցի հասարակ
կավե ամեն. սա այնքան ել դժվար
գործ չե, մանավանդ յեթե դուք
յեղել եք բրուտի արհեստանոցում
և տեսել եք, թե ինչպես ամենա-
պարզ «մեքենայով» կավից բար-
մազան ամաններ են պատրաս-
տում:

ԿԵՎԵ ԿՇՈԽԾԲ ՇԵՏ ԲԵՆ ԿԵՍԻ ՄԵԶ

Կավից կճուճ շինելու համար ա-
մենից առաջ պետք ե կավը հուն-
ցել—խառնել ջրի հետ:

Բայց սա վերջնական միջոց չե.
Ներկայումս գտել են մի միջոց,
վորով կավը հունցում են առանց
վոչ մի կաթիլ ջրի — դա մամ-
լակն ե:

Չոր կավը դնում են պողպատի
մամլակի տակ ու սեղմում. ճիշտ
ե, այս բանի համար հսկայական
ճնշում ե հարկավոր, այսինքն՝ 200
մթնոլորտ: Իսկ զիտեք, թե ինչ ե
նշանակում այս:

Վորպեսզի այդպիսի ուժով ճըն-
շենք թեկուզ մի զիրք, պետք ե
նրա վրա դնենք բեռնով լեվլեցուն
և ապրանքատար վագոն:

Ինչպես վոր յուղը պակասեց-
նում ե մեքենայի մասերի շփման
թափն, այնպես ել ջուրը թուլաց-
նում ե կավի մասնիկների ձեավո-
րումը: Միենայն ժամանակ ջուրը
թույլ չի տալիս, վոր կավի մաս-

Նիկները ցրվեն, ընդհակառակը
իրար մոտ ե պահում:

Այս ել բավական չե. մամուլի
տակ կավը վոչ միայն ձե ե ստա-
նում, այլ և սեղմվում ե ու ավելի
պնդանում:

Յեվ այս բանում մեծ չափով
ոգնում ե ջուրը:

Յեթե կավի խմորից շինած իրե-
րը չորացնենք, ջուրը կգուրշիա-
նա: Յեվ, ինչպես ասացինք, կավի
մասնիկները կիտանան, կավից շի-
նած իրերն ավելի ամուր ու հաս-
տատուն կդառնան: Որինակ, կա-
վից պատրաստած աղյուսը՝ չորա-
նալուց հետո կարող ե կարճանալ
առնվազն մեկ քառորդով:

Բայց այս բանն ունի և իր բա-
ցասական կողմերը: Կավից շինած
իրերը չորանալով՝ շատ հաճախ
ճաքճում են, ցամաքած լճակի
հունի պես (հատակը): Դուք յե-
րկե տեսած կլինեք անձնից՝ առա-
ջացած և ապա չորացած հողի շեր-
տի ճեղքվածքները: Սրանք նման են
այն ճեղքերին, վոր առաջանում

են յերկրաշարժից: Յերկի ամեն
մի մրջյունի համար այս ճեղքերն
անդունդներ են, վորոնց նայելն
անդամ սարսափ ե առաջացնում:

Վորպեսպի չորանալուց հետո չը-
ճաքճի, կավի հետ խառնում են
ավագ: Ավագի ցրված հատիկների
նորհիվ կավի մասնիկները միա-
նում են և կմախքի գեր կատա-
րում, թույլ չտալուվ, վոր կավի մաս-
նիկները շատ սեղմվեն և կուչ գան:

Այս բոլորը լավ ըմբռնելուց հե-
տո, սկսենք մեր աշխատանքը:

Վորևէ բրուտից վերցնենք մի
կար կավ, այդ կտորի մի յեր-
բորդի չափով ավելացնենք ջուր
և տբորենք: Յեթե ջուրը շատ լինի,
ձեռներս կկեղատուի, յեթե քիչ լի-
նի՝ կավը կցրվի:

Ավելացնենք մի քիչ մանր ավագ:
Լավ հունցինք, վորպեսպի ավագը
չնկատվի: Այժմ մնում ե ծեփել
մեր ցանկացած կճուճը:

Առաջին անդամ կարող ե խմորն
անհաջող դուրս գալ, քանի վոր
սարբեր տեսակի կավեր կան: Կավի

մի տեսակն ավելի ավագ ե պահանջում, մյուսն՝ ավելի քիչ։ Խըմորի բաղադրությունը հեշտ ե փորձով վորոշել։ Յեթե մի ամանն անհաջող դուրս գա—պետք ե փորձել ուրիշը ծեփել, մինչև վորը ըստանանք մեր ցանկացածը։

Ահա և կճուճը ծեփեցինք։ Սակայն ինչու այնպես անկանոն ե ու անճռունի։ Յեթե վերսից նայենք, կտեսնենք, վոր շըջազիծն ուղիղ չե, այլ ծումռած, ինչպես մարդու դեմքն ե լինում, յերբ այտերից մեկն ուռչում ե։

Ասենք, դժվար ել ե ավելի կանոնավոր ծեփել։ Չե վոր այս աշխատանքները աչքի չափով ենք կատարել, ուստի և շատ դժվար ե այնպես անել, վոր կճուճի պատերը կենարոնից հավասար հեռավորության վրա լինեն։ Այդ միենույն ե, թե առանց կարկինի ճիշտ շըջանագիծ գծելինք։

Ահա թե ինչու մեր բրուտները կճուճները ծեփում են հատուկ դագգյանի վրա։

Բըուտի դագգյանը կըոր տախտակ ե, վոր պտտում ե իր առանցքի շուրջը։ Այս դագգյանը շարժվում է վորքի աշխատանքի շնորհիվ։ Բըուտը կավի գունդը դնում է դագգյանի վրա, պտտվող տախտակի մեջտեղը, սեղմում ե մեծ մատով, մյուս մատներով բռնում խմորը դրսից։ Այս զեպքում բըուտի ձեռքը փոխարինում ե կարկինին, իսկ դագգյանի կըոր տախտակը կատարում ե շըջկող թղթի գեր։

Պատրաստի կճուճը դնում ենք դարակի վրա և մեկ-յերկու որթողնում չորանալու։ Չորանալուց հետո պետք ե այրել, թե չե ճեղքեր կառաջանան, իսկ յեթե ջուրը լցնենք մեջը, կավը նորից կթրջվի ու խմոր կգառնա։

Այժմ կճուճը դնենք վառարանի մեջ՝ չորանալու։ Յեթե վատ չորացած լինի—կիվլի։ Կավի մեջ մընացած ջուրը կերմությունից շոգիանում ե։ Շոգին ավելի շատ ե տեղ բռնում, քան թե ջուրը, ուս-

տի և կարող ե ձեղքել ու դրել
կճուճի պատերը:

Ուրեմն նախ քան այդ՝ կճուճը
պետք ե լավ չորացնել:

Այրած աղլուսը կազմված ե ըս-
տունդանման զանգվածից: Որեմն
և նրանից անհնար ե այլևս խմոր
ստանալ: Վառարանում մի քանի
ժամ մնալուց հետո, կճուճը կար-
մրում ե, այնպես վոր հնարավոր
ե մեջը ջուր ածել: Սակայն վատն
այն ե, վոր այսպիսի կճուճը թե-
պետ դանդաղ կերպով, սակայն
ելի ջուր ե թողնում իր միջից:

Յեթե դուք ուշադրությամբ դի-
տեք լավ շինած կճուճը, կտեսնեք,
վոր նա դրսից ծեփած ե ինչ վոր
նյութով, վոր շապկի նման շըջա-
պատում ե կճուճը և ծածկում բո-
լոր ծակոտիները: Այս նյութը կամ,
ինչպես ասում են՝ շիրան (ջնա-
րակ) թափանցիկ ե և պատուհանի
ապակիների նման ծածկում ե բո-
լոր անցքերը:

Ամենահեշտ միջոցն այն ե, վոր
աղն ու ավազը խառնենք ջրին և

այս խառնուրդով ծեփենք կճուճը՝
նախ քան այրելը: Աղը հալվում ե
ավազին ու կավին և ստացվում ե
այն շիրան, վոր հարթ ու հավա-
սար ծածկում ե ամանը և գեղե-
ցիկ տեսք տալիս նրան, հեշտաց-
նում նրա վրայի փոշին ու կեղար
ուղենքը: Իհարկե, այդ հեղուկի շո-
նորհիվ կավե ամանն ավելի յեր-
կարակյաց ե դառնում:





ԽՈՀԸՆՈՑԻ ԿՃՈՒԺԻ ԿԱՐԵՎՈՐ ԱԶԳԱ- ԿԱՆՆԵՐԸ

Բացի ալյումինի կաթսայից ու դյուրալյումինի սավառնակից, խոհանոցի կճուճն ունի նաև ուրիշ ազգականներ։ Նրանք ապրում են վոչ թե խոհանոցում, այլ մեր սենյակում, մի մեծ ու գեղեցիկ տան մեջ, վորը կոչվում է բուժեա։



Ահա շարպել են նրանք, կարծես թե զորահանդեսի յես դուրս յեկել, մանը պնակներ, խոր ափսեներ, թեյի բաժակներ, ափսեներ, բըռնակով շաքարամանը և քիթը ջարդված թեյամանը։ Բոլորն ել փայլուն սպիտակ հախճապակուց (ֆայնս) են շինած։

Բայց ամենից գեղեցիկը — իսկական ճենապակյա (ֆարֆոր) բաժակն ե, վորի վրա նկարած ե վարդագույն ձկնորսն իր վարդագույն կարթով՝ վարդագույն գետի ափին նստած։

Միթե կարելի յե սրա հետ համեմատել մեր գորշ ու համեստ շիրայով ծեփած խեղճ ու պարզ կը ճուճը։ Ասենք, յեթե կճուճը չիներ, չեր լինինակ ճենապակյա բաժակը։ Ճենապակին գանելու համար պետք ե նախ սովորելին կճուճներ ծեփել։

Ո՞վ ե ՀՆԱԲԵԼ ՃԵՆԵՊԱԿԻՆ
Ծովափնյա յերկրներում — Դա-
նիայում, Շվեդիայում և Ֆրան-

սիայում ջրերի ափերին ձգվում
են տափակ ու յերկար թմբեր: Յերբ
փորձել են քանդել, տեսել են, վոր
այդ թմբերը լի յեն ամեն տեսակի
թափթփուկներով. Ել խեցիներ, ձը-
կան վոսկորներ, կրծած գանգեր,
քարե դանակ, վոսկը կացին և
այլն: Հատ յերեսույթին հին ժա-
մանակներում այստեղ ապրել են
նախապատմական մարդկեր, վորոնք
իրենց բնակարանների շուրջը թո-
ղել են կոտրտած գործիքներն ու
խոհանոցի ավելցուկները:

Ժամանակի ընթացքում աղբա-
հորերից առաջացել են ամբողջ
բլուրներ, վորոնք ունեն հարյու-
րավոր մետր յերկարություն:

Այս թմբերում գտան նաև կավե
կճուճների կտորներ. նախապատ-
մական մարդու կճուճը մերի նման
չեր. ջնարակած (շիրայած) չեր,
տակն ել վոչ թե տափակ եր, այլ՝
կլոր կամ սրածայր: Բայց և այն-
պես իսկական կճուճներ եյին:

Այնուհետև հազարավոր տարի-
ներ անցան, մինչև վոր յերեան

յեկավ ճենապակին: Այս, չե՞ վոր
ճենապակուց իրեր պատրաստելը
շաա ավելի դժվար ե, քան կավե
կճուճ ծեփելը:

Առաջին անգամ չինացիներն
եյին, վոր գտան ճենապակին թըր-
ծելու (այրելու, շիկացնելու) գաղտ-
նիքը. այս բանը պատահեց մեզ-
նից մոտ 1700 տարի առաջ: Բայց
խոշոր հաջողություն ձեռք բերին
նըանք միայն վերջին շրջանում,
15-րդ դարում Մին տոհմի թա-
գավորների շրջանում:

Չինական ճենապակին Յեկո-
պայում վոսկու հավասար արժեք
ուներ: Վոչոք չգիտեր պատրաս-
տելու յեղանակը, մինչեւ վոր մի
ալիմիկոս գտավ չինացիների
գաղտնիքը:

Այստեղ ել պատահեց նույն յե-
րեսույթն, ինչ վոր չինացիների
մյուս գյուտերի՝ վառողի ու գրքի
տպագրության նկատմամբ: Յեկ-
ոպացիները նորից հայտնագործե-
ցին այդ, վորովհետև չինացիները
վոչոքի հաղորդակից չեյին անում



իրենց գիտելիքներին։ Տպագրության արվեստի հեղինակին մննք գիտենք—դա Գուտտենը բերդն եր. վառողն՝ ըստ ավանդության գտել ե Բերտոլդ Շվարցը, իսկ ճենապակին՝ Բետֆերը։

Բետգերը Սաքսոնիայի իշխան Ուգոստոս (Ազգուտ) Հզորի պալատական ալքիմիկոսն եր։ Ալքիմիկոսները կարծում եյին, թե պղնձից, յերկաթից կամ արծիճից կարող են փոսկի ստանալ, յեթե այս մետաղները խառնեն «փիլիսոփիայական քարի» հետ։ Տամնյակ տարիներ նրանք փնտում եյին այս յերևակայական քարը, վորը յերբեք չի յեղել, թեպետ շատշատերն ընդունում եյին նրա գոյությունը։ Իշխանները, վոր միշտ փողի կարիք եյին զգում, ծառայության եյին վերցնում ալքիմիկոսներին, հուսալով արհեստական փոսկով լցնել իրենց դատարկ գանձարանները։ Վորպեսզի պալատական ալքիմիկոսը չփախչի մի ուրիշ իշխանի մոտ, նրան փակում եյին

և հսկողության տակ առնում։ Պատահում եր նաև այն, վոր իշխանն անոգուտ սպասումներից ձանձրանալով և իր յերազած վոսկին ու հարստությունը չստանալով, մահապատժի յեր յենթարկում անհաջողակ գիտնականին։ Միայն նրանց կախում եյին շուքով. վոսկեզօծում եյին կախաղանը, չգիտեմ՝ ծաղրում եյին այդ դժբախտներին, թե սա նշան եր առանձին հարցանքի դեպի գիտությունը։ Մեզ համար պարզ ե, սակայն, վոր փոսկեզօծ կախաղանն, ինչպես և փոսկեզօծ դեղահատը (պիլյուլ) վոչ մի առավելություն չունեն սովորականի հանդեպ։

Այս յերևակայական գյուտերի յետնից ընկնելով, ալքիմիկոսները շատ հաճախ պատահմամբ այլ դյուտեր եյին անում։ Այսպես ել պատահեց Բետգերի հետ։

Նա դեռևս 14 տարեկան եր, յերբ պատահմամբ մի ձեռագիր գտավ այն մասին, թե ի՞նչպես կարելի յե վոսկի շինել։ Այդ որպա-

Նից Բետգերն ուրիշ բանի մասին
չեր մտածում։ Յերկի նա բոլորը-
վին ել ալքիմիկոս չեր դառնա,
յեթե իր տրամադրության տակ
պատրաստի լաբորատորիա չունե-
նար։ Դեղավաճառ ծորնի մոտ
աշակերտ լինելով, ամեն գիշեր իր
տիրոջ հեռանալուց հետո նրանից
ծածուկ սկսում եր իր ալքիմիա-
կան փորձերը։

Մեկ անգամ, յերբ նա կլանված
եր իր փորձերով, գեղատան դուռը
բացվեց և պարոն ծորնը ներս մտավ
գիշերային զգեստով ու զլսարկով։

— Ի՞նչնիվ ես զբաղված, այ ան-
պիտան։ Ի՞նչպես ես համարձակ-
վել առանց թույլավության վերց-
նելու այս անորմները։ Քո ամբողջ
ոռնիկը չի բավականանա, յեթե
կոտրես այդ մեծ փորձանոթները։

— Յես վոսկի յեմ պատրաս-
տում — վախվիմելով ասաց Յո-
հաննը։

— Վոսկի, այ դու խաբերան-
դու լավ ե սովորես, թե ինչպես
պետք ե պատրաստել կալչուն սպե-

ղանի (պլաստիկ)։ Խնձ վոչ թե
ալքիմիկոս ե պետք, այլ գեղա-
տան աշակերտ։ Հավաքիր ունե-
դած - չունեցածդ ու աչքիցս կո-
րիք։ Ասա հորդ, վորքո զլխից «ռադ-
անի» այդ հիմարությունները։

Տխուր ու տրտում տուն դար-
ձավ Բետգերը, իր հետ տանելով
կարկատած շապիկն ու վարտիկ-
ները և մի թանկագին ձեռագիր,
վոր նրան փառք ու հարստություն-
եր խոստանում։

Տանեցիք նրան տհաճությամբ
դիմավորեցին։ Թեպետ և հայրը
դրամ կտրող եր, բայց նրանց տանը
մի ավելորդ դրամ չեյիր ճարի։

Մի քանի ամիս չեր անցել գեռ-
ես, յերբ Բետգերն ստիպված յե-
ղավ նորից վերադառնալ ծորնի
մոտ։ Նա խոսք տվեց, վոր այլես
յերեք ալքիմիայով չի զբաղվի։
Բայց այդ հետաքրքրությունն այն-
քան ուժեղ եր, ինչքան թղթա-
խողի մոլությունը։

Բետգերը նորից սկսեց իր գի-
շերային փորձերը, բայց այս ան-

գամ շատ մեծ զգուշությամբ։
Ասենք Յորնը նույնպես զգուշեցել
եր, Յեվ ահա մի դիշեր դեղավա-
ճառը նրան բռնեց հանցանքի կա-
տարման ըոպեյին ու առանց այլն-
այլության վոնդեց նրան դեղա-
տնից։

Բետքերը հուսահատվեց։ Տուն
դառնալ չեր ու զում։

Սակայն բախտը խղճաց անտուն
ալքիմիկոսին։ Նա ծանոթացավ մի
նշան ավոր անձնավորության՝
ֆոն - Ֆյուրստենբերգիշխանինետ,
վորը տեղեկանալով 16 տարեկան
զիտնականի փորձերի մասին, վեր-
ցրեց նրան իր պալատը և նրան
հատկացրեց կազմակերպված լա-
բորատորիա։

Բետքերի բախտը բանեց. նրան
հրաշալի զգեստներ հազցրին, փող
տվին և շքեղ կահավորված բնա-
կարան հասկացըրին։ Լսելով այս
հաջողությունների մասին, Յորնը
պատմում եր իր հաճախորդներին,
վոր իր աշակերտը նշանավոր ար-
քիմիկոս ե դարձել։ Իսկ գնորդ-

ները պատասխանում եյին, վոր
Յորնի նման ուսուցչի մոտ հնա-
րավոր ե ամեն տեսակ իմաստու-
թյուն սովորել։

Սակայն տարիներն անցնում
եյին իրար յետեից և չնայած Բետ-
քերի պատկառելի մորուքին, նրա
փորձերը վոչ մի արդյունք չեյին
տվել։ Իշխանը, վոր սկզբում շատ
սիրալիր եր, սկսեց կասկածել —
չինի թե Բետքերը մի սովորական
խարեւա յե։

Բետքերը փորձեց փախչել, բայց
նրան ձերբակալեցին և ստիպեցին
աշխատանքը շարունակել։ Յերբ նա
ծառայում եր գեղատանը, նրան
պատժում եյին փորձերի համար,
իսկ այժմ սպառնում եյին խիստ
պատիժ տալ՝ յեթե հրաժարվի այդ
փորձերից։

Վերջիվերջո նրանից պահանջե-
ցին, վոր գրավոր ներկայացնի
վոսկի պատրաստելու յեղանակը։
Այժմ իսկապես վոր նա ստիպված
եր խարեւայություն աներ, նա
գրեց մի խորհրդագոր ու կնճռու

շարադրություն, վորն սկզբից մինչև վերջը մի անհեթեթություն եր: Բայց և այնպես չաջողվեց հիմարացնել իշխանին: Խաբեբայությունը բայցվեց և իշխանի հրամանով բանտարկեցին Բետգերին:

Այժմ արդեն Յորնը չեր հպարտանում իր աշակերտով:

— Յես միշտ ասում եյի, վոր Բետգերը խաբեբայ յե ու ստախոս և վոր նրան կախաղան ե վիճակված, — համոզում եր դեղավաճառն իր հաճախորդներին, վորոնք միքանի ժամանակ առաջ նրա բերանից գովեստներ եյին լսում Բետգերի հասցեյին:

Բարեբախտաբար, Յորնը դարձյալ սխալվեց: Բետգերի գործը հաջող գնաց: Նա մի նոր հովանավորող գտավ — կոմս Զիրնհառուղենին, վորի խորհրդի համաձայն իշխանն առաջարկեց Բետգերին Ճենապակի պատրաստելու գործով զբաղվել: Իսկ մենք գիտենք, վոր Ճենապակին (Փարփորն) այն ժամանակ վոսկու հավատար արժեք

ուներ: Վաղուց չեր, վոր Ռգոստոս իշխանը պրուսական իշխանին մի ամբողջ զունդ զինվոր երտվել՝ 48 կտորից բաղկացած չինական ամանեղենի (սերվիզ) փոխարեն:

Փորձերը հաջող անցան. Բետգերը Մեյսենի կավից Ճենապակի պատրաստեց, վորը սակայն սպիտակ չեր, այլ կինեմոնագույն:

Գյուտարարը վարձատրվեց առատ կերպով, սակայն նրան ազատություն չպարզեցին:

Ճենապակի պատրաստելու յեղանակը պետական գաղտնիք հայտարարվեց: Բետգերին իր յերեք ոգնականների հետ՝ հանցագործների նման կալանքի տակ առան:

Սկզբում Ճենապակիյա ամաններ կարելի յեր գտնել միայն պալատներում: Սականիայի իշխանը մեյսենյան սափորները նվիրում եր մյուս իշխաններին: Սակայն 1707թ. Ճենապակին առաջին անգամ վաճառքի դուրս բերին Լեյպցիգի տոնավաճառում: Մեյսենում, Ալբ-

X

ըեխտսբուրդ ամրոցում ձենապա-
կու գործարան հիմնեցին: Այստեղ
վերջապես Բետքերին հաջողվեց ըս-
պիտակ ձենապակի պատրաստել:

Մեյսենյան ամանները, վոր
մյուսներից հեշտ ետարբերել գոր-
ծարանի նշանով — յերկու հատվող
թրեր — շուտով հռչակվեցին ամ-
բողջ աշխարհում: Շատ դժվար եր
այդ ամանները տարբերել իսկա-
կան չինական ձենապակուց:

Բետգերը յերկար տարիներ անց-
կացրեց Մեյսենի ամրոցում՝ իբրև
գերիւ Վոչինչ չեյին խնայում,
բացի ազատությունից:

Նա արգեն անց եր կացրել իր
յերիտասարդությունը, յերբ նորից
փորձեց փախչել. այս նպատակով
գաղտնի բանակցություններ սկսեց
պյուսական իշխանի հետ: Սակայն
փախուստը չհաջողվեց. բանակ-
ցությունները բացվեցին, նա ձեր-
բակալվեց ու գատապարտվեց: Նրա
համար բարեբախտություն եր,
վոր մեռավ բանտում մահապատ-
ժից առաջ:

ՃԵՆԵԳԸՆԻ ԱՐՏԵԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՂՏՆԻՔԸ

Արդյոք ի՞նչպիսի պետական
գաղտնիք եր, վոր արդպես խնամ-
քով թագյնում եյին Մեյսենի
բանտապահները: Խնչումն եր ձե-
նապակի պատրաստելու գաղտ-
նիքը:

Գաղտնիք կար, այն ել վոչ թե
մի, այլ մի քանի:

Առաջինը — պետք եր վերցնել
վոչ թե սովորական, այլ ամենա-
մաքուր և սպիտակ կավը: Բետ-
գերն այդպիսի կավը պատահաբար
գտավ: Մի անգամ, յերբ նա ինչ
վոր պուդրա յեր գործածում, նկա-
տեց, վոր սովորական պուդրա չե:
Բայտ յերեսութին շատ մաքուր
կավ եր:

Պարզվեց, վոր իսկապես կավ
եր և այդ կավից մեծ քանակու-
թյամբ կա Մեյսենի ամրոցի ըլր-
ջակայքում: Բետգերը փորձեց այս
պուդրայից ձենապակի պատրաս-
տել և այս բանը հաջողվեց:

Յերկրորդ խնդիրն ավելի դըժ-
վար եր. — գտնել սպիտակ մաքուր
ավագ և լավ փայլար (սլյուդա)
կամ դաշտային շպատ. Ավազը
պետք ե նրա համար, վոր կավը
չորանալուց հետո չճաքճքի, իսկ
սլյուդան կամ շպատը առհասսա-
րակ դյուքացնում ե կավի հալ-
վելը:

Յերրորդ գաղտնիքն այն եր,
վոր թէ ավազը և թէ փայլարն ու
շտապը պետք ե լավ տրորել և
մաքրել խոշոր հատիկներից՝ ջրի
միջոցով զտելով այս: Ինչ վոր
ամանի տակն ե նստում, պետք
չի. պիտանին բարակ տիղմն ե, վոր
ամանի տակն ե նստում դանդաղ
կերպով: Այս ձևով զտում են նաև
կավը:

Կավի բարակ մասնիկները հուն-
ցում են ավագի ու շպատի հետ:
Այս խմորից առարկաներ են պատ-
րաստում դազզյանի վրա: Ծեփե-
լու և չորացնելու գործում վոչ մի
առանձին հնարագիտություն չկա:
Բայց ձենապակու թրծեն այն չի,

ինչ վոր կճուճինը: Այստեղ մեծ
հմտություն ե հարկավոր:

Ճենապակին յերկու անգամ են
այրում: Սկզբում շատ թեթև, ապա
ծածկում են ջնարակով (շիրա) և
նորից այրում: Այս անգամ արդեն
ճենապակու արտադրության գրլ-
խավոր գաղտնիքն ե հանդես գալիս:

Իսկ այս գաղտնիքն այն ե, վոր
ճենապակին պետք ե այրել ինչ-
քան: կարելի յե ուժեղ չափով,
այնպես, վոր հալվելու աստիճանի
համնի: Իսկ գիտե՞ք, թե ինչ ե
նշանակում այս: Դժվարությամբ
ճենապակած ամանը բարձր ջերմու-
թյան ազդեցության տակ թեք-
վում ե, այլանդակվում:

Անա այստեղ անհրաժեշտ ե
գործադրել զանազան տուփեր ու
հենարաններ, վորպեսզի նրանք պա-
հեն ամանը և թույլ չտան թեք-
վելու: Բայց և այնպես հնոցներում
մեծ քանակությամբ ամանեղեն ե
փշանում:

Մի ուրիշ գաղտնիք ել կա.
յեթե ներքենի շուրթից ջնարակը

չմաքրենք, նա անպատճառ կհալ-
չի, կտարածվի և ամանը կկպչի
հենարանին:

Իսկ ինչու արդքան ուժեղ են
տաքացնում ձենապակյա ամանը:
Այ թե ինչու. յեթե թուլ կերպով
այրեն, կտացվի վոչ թե ձենա-
պակի (Փարֆոր), այլ հախճապակի
(Փայանս): Իսկ ինչումն ե սրանց
տարբերությունը: Այս, վոր ձենա-
պակին ապակու նման հալած ե,
մասսիվ, իսկ հախճապակին, կավե-
կձումի նման, ծակոտկեն ե, անց-
քեր ունի: Ճենապակու մասնիկ-
ները բարձր ջերմության տակ
հալվել են, միացել, այդ պատ-
ճառով ել թափանցիկ ե: Յեթե
ուզում եք այս յերկուան իրարից
տարբերել, բոնեցեք լույսի դիմաց:
Ավելի հեշտ կինի տարբերելը,
յեթե զիտեք ամանների տակը:
Յեթե ներքեի շրջագծի վրա ջնա-
րակի հետքեր կան — կնշանակի
հախճապակի յե, իսկ յեթե ջնա-
րակը մաքուր սրբած ե, ուրեմն
ձենապակի յե:

ԶԵՐ ԲՈՒԺԵՏԱԽԱՐ ԿԸՆ ԾՎԵԶԻՑ
ՊԱՏՐԵՍՏԵՒ ԻՐԵՐ

Ուշագրությամբ զիտեցեք բու-
ֆետի զարակի վրա զարսած ա-
մանները: Բացի բաժակներից ու
ափսեներից, այսաեղ կան նաև
ավազից պատրաստած ամաններ:
Այն, մի զարմանաք, ավազից են
շինած գավաթները, բաժակները,
աղամանը: Չե վոր ապակին ավա-
զից են պատրաստում, ամենապո-
վորական ավազից, վորից մի ժա-
մանակ դուք կարկանդակներ եյիք
պատրաստում: Ինչու միայն բա-
ժակներն ու գավաթները: Այժմ
ամբողջ շենքեր են կառուցում
ապակուց և յերկաթից:

Լոնտոնում մի հսկա շենք կա,
վորն այդպես ել կոչվում ե՝ «Ա-
պակյա տուն»: Նա պինքան ընդար-
ձակ ե ու բարձր, վոր գարեւոր ծա-
ռերն այստեղ գահիձներում աճում
են՝ ինչպես բաց ողում: Յեվ այս
հսկայական շենքը կանգնած ե ա-
մուր ու փուլ չի գալիս, թեպետ

Կիսով չափ ավագից և կառուց-
ված:

ԿԸՐԺԻ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ԿԸՆ ԱՐԴՅՈՔ

Հասարակ շղեր պատրաստելիս
ավագը լցնում են հրակայուն կա-
վից պատրաստած կճուճների մեջ,
վրան ավելացնում կավիճ և սողա-
ռու դնում հատուկ վառարանի մեջ:

Այս յերեք նյութերն ել — ա-
վագը, սողան և կավիճը շիկանում
են և իրար միանում. և ստացվում
է ջրանման մի հեղուկ, ավելի ճիշտ՝
հեղուկային գրությամբ ապակի:

Յեթե ջուրը սառեցնենք, նա
ելի հեղուկ գրությամբ կնաս, քանի
ու ջերմությունը զերոյից ցածր
չի իջել. Իսկ յերբ ջերմաչափը
ցույց կտա 0° կամ ավելի ցածր,
ջուրը կսկսի պնդանալ — սառույց
դառնալ:

Այլ բան ե հեղուկ ապակին:
Սառչելով, նա սկսում ե դանդաղ
կերպով թանձրանալ: 1200° ջեր-
մության տակ նա հեղուկ ե (սի-
րող), 1000°-ի վրա ձգվում ե թելի

պես, 800°-ի վրա ավելի յե թանձ-
րանում ու ձգվում, հետզհետե խը-
մորի յե նմանվում և այնուհետեւ
պնդանում ու մեզ ծանոթ ապա-
կու գրություն ստանում:

Այժ կարող եք վորոշել, թե վոր
աստիճանի վրա նա հալվեց, թան-
ձրացավ կամ սառեց — անհնար ե:

Ահա թե ինչո՞ւ շատ հաճախ ա-
պակին կոչվում ե «կարծր հեղուկ»,
թելետ առաջին հայացքից սա
անմիտ բան ե թվում, ինչպես,
որինակ՝ սպիտակ մուրը կամ տաք
սառույցը:

Յեթե ապակին «կարծր հեղուկ»
չիներ, յեթե նա չթանձրանար ու
խմորի պես չձգվեր, մենք չեյինք
կարողանա նրանից բազմազան իրեր
պատրաստել, այ — այս հաստա-
փոր ջրամաները, ծաղկավոր սա-
փորները կամ ձևավոր գավաթ-
ները:

ՄԵՊԱՆԻ ՊԼՊԸԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԲԵՆ

Ասում են՝ յերկաթը տաք-տաք
կծեծեն: Ապակու մասին ել նույնը



կարելի յե ասել, փչիր, քանի դեռ
տաք ե, քանի դեռ չի կարծրացել
ու փխրունացել:

Դուք գիտեք, վոր ապակյա
հրերի մեծ մասը փչելով են պատ-
րաստում, ճիշտ այնպես, ինչպես
յերեխաները սապնի պղպջակներ
են փչում: Միայն թե ծղոտի փո-
խարեն վերցնում են յերկաթե յեր-
կար ձողեր, վորոնց մի ծայրին
հազցրած ե փայտի ծխամորձ
(«մուշտուկ»): Հենց վոր հալած
ապակին սկսում ե սառչել, բան-
վորը վերցնում ե մի գունդ «ա-
պակե խմոր», հազցնում մնամեջ
յերկաթե ձողի ծայրին ու փչում:
Ստացվում ե ապակե փուշիկ: Այս
փուշիկից կարելի յե ամեն ինչ
շինել — բաժակ, զավաթ, շիշ, նույն
իսկ պատուհանի ապակիներ: Յեն-
թաղբենք՝ պետք ե շիշ պատրաս-
տել: Բանվորն այս փուշիկը դնում
ե պատրաստի կաղապարի մեջ ու
այնքան փչում, մինչև վոր փու-
շիկը լցնում ե կաղապարն ու հաս-
նում նրա պատերին: Յերբ շիշը

սառչում ե, հեշտ ե լինում կաղա-
պարի միջից հանելը, այս պատ-
ճառով ել կաղապարները հանովի
յեն լինում, մասերից պատրաս-
տած: Իհարկե, նախ պետք ե շիշն
անջատել փչելու փողից: Սա դը-
փար չե, պետք ե միայն սառը ձո-
ղիկը քսել շշի տաք բկին:

Դժվար թե լինի մի այնպիսի
ձե, վոր փորձված փչողը չկարո-
ղանա ստանալ հասարակ փողի
միջոցով: Տեսէլ եք լաբորատորիա-
ներում գործածվող ապակե անոթ-
ները. դրանք բոլորն ել փչելու
միջոցով են պատրաստված:

Ապակի փչելը ծանր ու վսասա-
կար աշխատանք ե: Ուստի և մեծ
գործարաններում, մանավանդ յերբ
պետք ե փչելով խոշոր առարկա-
ներ պատրաստել, ոգտագործում
են վոչ թե մարդկային թոքերն,
այլ մեխանիկական ողամղիչներ:
Բասն տարի առաջ հնարեցին շշեր
փչելու մեքենա: Այս մեքենան փո-
խարինում ե 80 փչող բանվորի,
մինչդեռ ինքը միայն յերկու հոգու

յե զբաղեցնում: Մեքենան որական պատրաստում ե մինչև 20.000 շիշ:

Փշելը — մի գործ ե. բայց պետք ե իմանալ նաև փշելուց հետո սառեցնել: Յեթե ապակյա ձողիկը հալենք կրակի վրա և ապակու կաթիլը ջրի մեջ ընկնի, կստանանք թափանցիկ ու կարծր մի շիթ, վոր արցունքի յե նման: Յեթե փորձենք կոտրել այս շիթը, նա կփռշիանա: Ահա թե ինչքան անկայուն ու փուխը ե շատ արագ կերպով սառեցրած ապակին:

Կայուն ապակի ստանալու համար յերկար ժամանակ պահում են հատուկ վառարանում, վորտեղ նա շատ դանդաղ ե սառչում:

Կան այնպիսի ամաններ, վոր արդ բոլորից հետո դեռ հղկում ել են հղկիչ քարի վրա, որինակ՝ բաժակները, գավաթները, վագերը և այլն: Ստանում ենք անհարթ (աերշօվատան), փայլատ (մատօնան) կողեր, վոր հետո հղկում են զմունիով (նաժդակ) կամ ուրիշ փո-

շիյով, վորպեսզի հարթ լինի և փայլ ստանա:

Շատ անդամ ել իրերը հենց միանգամից ձուլում են, այնպես, ինչպես չուգումից իրեր պատրաստելիս: Իսկ յեթե ապակին դյուրահալ ե, ուղղակի մամլում են: Հալած կամ մամլած ապակուց պատրաստած իրերը հեշտ ե տարբերել հղկածից. կողերը կոր են, և վոչ թե սուր: Այս նշանը չպետք ե մոռանալ: Գուցե ձեզ յերբեցե պետք գա հղկած բաժակը տարբերելու ավելի եժան, ձուլած բաժակից: Հայելու մեծ ապակիները նույնպես ձուլելով են պատրաստում. ստացվում են ապակու մեծ ու հաստ շերտեր, վոր հետո հրդկում են:

Ապակյա իրերը տարբերվում են վոչ միայն պատրաստելու յեղանակով:

Ապակիները լինում են գանագան:

Որինակ՝ հասարակ կանաչ շերի ապակին պատրաստում են դեղին

ավագից, սոդայից և կավիճից։ Սու-
վորական ավագի մեջ մեծ չափով
ժամանակ կա, վորից և ապակին դե-
ղին գույն ե ստանում։ Հալեցնող
վառարանում գեղին գույնը փոխ-
վում է կանաչի։ Ուրեմն կանաչա-
վուն յերանգը հավանական ապա-
ցույց ե, վոր ապակու մեջ յեր-
կաթ կա։

Լուսամուտի ապակիների համար
վեցնում են ավելի մաքուր և սպի-
տակ ավագ։ Իսկ ամենալավ ապա-
կու համար գործածում են իսկա-
կան մաքուր ու սպիտակ ավագ,
սոդայի փոխարեն՝ պատաշ, իսկ
կավիճի փոխարեն՝ կիր կամ սուսր
(սուրբիկ)։ Ստացվում ե ծանր,
փայլուն ապակի, վոր իր փայլով
ալմաստն ե հիշեցնում։

Սա կոչվում ե բյուրեղյա ա-
պակի։

ԶՃԱՔՋԱՂ ԸՊԵԿԻ

Առանց ավագի չի հաջողվի ա-
պակի պատրաստել։ Վազուց ելին
նկատել, վոր ամբողջ զաղտնիքն

ավագի մեջ ե, բայց չեյին իմա-
նում՝ ինչպես հալել ավագը։ Այս
բանը հաջողվեց 25 տարի առաջ։
Պարզվեց, վոր հալած ավագից կամ
կվարցից պատրաստած ամանն ա-
պակուց շատ ավելի ամուր ե։ Կա-
ռելի յե շիկացնել ապա սառը ջրի
մեջ իջեցնել — և վոչ մի վնաս չի
պատահի։ Ներկայումս դեռ ևս
կվարցի ամանեղենները շատ թանկ
են, վորովհետև կվարցը հալելու
համար անհրաժեշտ ե ունենալ
ելեկտրական վառարաններ, վորոնք
մեծ քանակությամբ եներգիա յեն
պահանջում։

Կվարցն ապագա ապակին ե։
Իսկ առայժմ մարդիկ աշխա-
տում են բարձրացնել սովորական
ապակու վորակը։ Պատերազմի ըն-
թացքում ամերիկացիներին հաջող-
վեց պատրաստել այնպիսի ապա-
կի, վորը նույն իսկ 200⁰ տաքաց-
նելուց և սառցե ջրում հանկարծա-
կի սառեցնելուց անգամ չի ճար-
վում։ Այս ապակին կոչվում ե
«Պիրեկս»։

ՎԵՅԵՐՈՐԴ ԿԱՅԱՐԱՆ
ՊԱՀԱՐԾԱ



ՎԵՐՁԻՆ ԿԵՑՄՐԸՆԸ

Մեր ճանապարհորդությունը մոտենում է իր վերջին։ Ահա և վերջին կայարանը — հագուստեղենի և սպիտակեղենի պահարանը։ Կան այնպիսի հսկա պահարաններ, զորոնք սենյակի կեսն են զբաղեցնում, վորոնց մեջ խալի ժամանակ վեց մարդ կարող են պահվել։ Կան և գաճաճ-պահարաններ, վորոնց մեջ ամենափոքր յերեխան ել

չի կարող թագնվել։ Կան հոյակապ պահարաններ, վորոնց գոնիքն ամբողջվին հայելիներով են պատաժ։

Այս պահարանը, վորին մենք մոտեցանք, վոչ շատ մեծ է, վոչ ել շատ փոքր։ Նա ունի յերկու բաժին — մեկը՝ սպիտակեղենի, մյուսը՝ զգեստի համար։ Դուան վրա հագցրած է հայելի — վոչ շատ մեծ, վոչ ել շատ փոքր։ Նախ քան պահարանի մեջն անցնելը, խոսենք հայելու մասին։

ՀԱՅԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալում, յերբ դեռևս չկային ապակե հայելիներ, նրանց փոխարեն գործ եյին ածում մետաղյառառուցիկ թերթիկներ, վոր շինում եյին արծաթից կամ արույրից (պղինձի ու անաղի խաւնուրդ)։

Վերջիվերջո գլխի ընկան, վոր մետաղյառերար ողի ազդեցությունից պաշտպանելու համար կարելի յե ապակու տակ ծածկել, ճիշտ այնպիս, ինչպես անում ենք ներ-

կայումս լուսնակարչական պատ-
կերների նկատմամբ:

Ահա և ապակյա հայելին:

Յերկար ժամանակ հայելին պատ-
րաստում եյին հետեւյալ կերպ.
ապակու կտորի վրա գնում ելին
անագե մի թերթ և վերկից ծածկում
սնդիկով: Սնդիկի ազդեցությամբ
հաղողում եր անագը և նոր լուծույթն
ստանում եր հրաշալի հատկու-
թյուն — պինդ կայում եր ապա-
կուն:

Ապակին հետզհետե թեքում եյին,
վոր ավելորդ սնդիկը ցած հոսի,
անցնում եր ամբողջ մի ամիս,
մինչեւ վոր հաջողվում եր ապակին
ծածկել սնդիկի հարթ շերտով:

Գիտնական լիբիսը նոր և ավե-
լի լավ միջոց առաջարկեց. այդ
միջոցի համաձայն ապակու յերե-
սին լցնում են արծաթի լուծույթ,
վորը կես ժամում ծածկում ե ա-
պակու մակերեսը փայլուն շերտով:
Ավելի խնամքով պահպանելու հա-
մար հայելու յետեմի կողմը ծած-
կում են ներկով:

Սա ավելի լավ միջոց ե, վորով-
հետեւ հնարավոր ե խուսափել թու-
նագոր սնդիկից և հայելին ել ավե-
լի պարզ ե լինում:

Յեթե իրար կողքի դնեք արծա-
թից և սնդիկից պատրաստած հա-
յելիները, իսկույն կնկատեք սրանց
տարբերությունը. 25մոմանոց լամ-
պը սնդիկի հայելու մեջ 16 մոմա-
նոց և թվում. ահա թե ինչքան
լույս ե խլում սնդիկի շերտը:

Թվում ե, թե հայելու արտա-
դրությունն այնքան ել ոի բարդ
ու դժվարին գործ չի յեղել, մինչ-
դեռ 300 տարի առաջ հայելիները
պատրաստում եյին միայն մի քաղա-
քում — Վենետիկում: Հայելի պատ-
րաստելու գաղտնիքը նրանք եյին
պահում: Նրանց որենքներով մահա-
պատիժ եր սպասում այն քաղաքա-
ցուն, վորն ոտարերկրացիներին
կհաղորդեր հայելի պատրաստելու
գաղտնիքը: Վիճետիկի կառավա-
րության կարգագրությամբ ապա-
կու գործարանները փոխադրեցին
մեկուսացած Մուրանո կղզին, ուր

ստարերկրացիների մուտքն արգելված եր:

Մի ժամանակ այդ կղզում կար 40 գործարան, մի քանի հազար բանվորներով: Միայն ֆրանսիան տարեկան 200 արկղ հայելի յեր ուստանում Վենետիկի գործարաններից: Այստեղ վոչ միայն հայելիներ եյին պատրաստում, այլև սպիտակ ու գունավոր աղակուց ամեն տեսակ ամաններ: Վենետիկի ապակին հռչակված եր ամբողջ աշխարհում, նրանց պատրաստած թասերն ու վագերն իրենց նըբությամբ ու գեղեցկությամբ անմրցելի յեն:

Մուրանոյի ճարպիկ վարպետները Վենետիկի հանրապետության մեջ մեծ հարգանք ելին վայելում: Աղակեգործի կոչումը նույնքան պատվավոր եր, ինչքան ազնվականի կոչումը: Կղզին կասավարվում եր ապակեգործներից ընտրված խորհրդով: Մբիրները (վատիկանները), վորոնցից սարսափում ելին Վենետիկի բնակիչները, վոչ

մի իրավունք չունեյին Մուրանոյի բնակիչների նկատմամբ:

Միայն թե այդ ապակեգործների ազատությանը սահմանափակված եր: Մահվան պատժի սպառնալիքով նրանց արգելված եր այլ յերկիր գնալը: Մահվան յենթակա յեր վոչ միայն վախչողն, այլ և նրա վողջ ընտանիքը: Այնուամենայնիվ վենետիկցիներին չհաջողվեց պահպանելու հայելու գաղտնիքը:

Մեկ անգամ Վենետիկի ֆրանսիական դեսպանը Փարիզից գաղտնի նամակ ստացավ, վորը նրան չտվագանց անհանգստացրեց: Նամակը զրել եր ամենակարող Կոլբերը (մինիստր): Դեսպանին հրամայվում եր անմիջապես բանվորներ գտնել թագավորի հայելու գործարանի համար: Այն ժամանակվա գործարանները (մանուֆակտուրա) իսկապես խոշոր արհեստանոցներ ելին, վոր միայն բանվորների թվով ելին տարբերվում վոքր արհեստանոցներից: Մեքենաներ դեռ ևս չկային:

Դեսպանը գիտեր, վոր Մուլա-
նոյի բանվորներին գրավելը շատ
զժվար գործ է: Նա լավ ծանոթ եր
վենետիկի որենքների ժողովածվի
այն կետին, վորն ասում եր. «Յեթե
ապակեգործն իր արհեստը կփո-
խադրի այլ յերկիր, նա կարգադ-
րություն կստանա վերդառնալու»:
Յեթե չվերադառնա, նրա ազգա-
կանները կը անտարկվեն: Յեթե դար-
ձյալ չվերադառնա, այն ժամանակ
մարդ կուղարկեն՝ նրան սպանելու»:
Սյնդես վոր, յեթե նույն իսկ հա-
ջողվեր հրապուրել բանվորներին,
անհնար եր հետքերը թագցնել: Չե-
զոր գեսպանը չի կարող խախտել
այն յերկրի որենքները, ուր ուղարկ-
ված ե ինքը:

Նույն յերեկոյան ֆրանսիական
գեսպանատան շենքի առջև կանգնեց
ծածկած մի նավակ (գոնդոլ): Վե-
նետիկի բոլոր տները դասավորված
են, այդ բաղաքի ջրանցքների ափե-
րին:

Գոնդոլից դուրս յեկավ մի
թիկնեղ մարդ, ու թիկնոցում փա-

թաթված: Մի քանի ժամ անցավ,
մինչև վոր նա յետ դարձավ:
Այդ որվանից խորհրդավոր ան-
ծանոթն սկսեց հաճախ այցելել
գեսպանատուն: Յեթե մեկն ու մե-
կին հաջողվեր դիտել ֆրանսիացի
մեծանուն ազնվականի առանձ-
նասենյակը, նա կտեսներ, թե ի՞նչ-
պես գեսպանը տաք-տաք խո-
սում է պարզ հագուստով ծածկված
մարդու հետ: Այս մարդը — Մու-
րանո կղզու մանրավաճառ խա-
նութպանն եր:

Ինչի մասին եյին խոսում ազ-
նվականն ու մանրավաճառը:

Հայտնի յե միայն, վոր մի շա-
բաթ անց ֆրանսիական գեսպա-
նատան սուրհանդակը կոլբերին մի
նամակ տարավ, վորը հաղորդում
եր, վոր չորս ապակեգործ բանվոր
համաձայն են Ֆրանսիա փախչել
և նրանց փախուստի համար ամեն
ինչ պատրաստ ե:

Անցավ մի քանի շաբաթ: Մի ժութ
գիշեր Մուլանոյին մոտեցավ 24
զինված մարդկանցով բեռնավոր-

ված մի բարկա (բեռնանավակակ):
Մթության մեջ յերեացին չորս հո-
գի՝ մեզ ծանօթ մանրավաճառի
ուղեկցությամբ: Կարձ խոսակցու-
թյունից հետո լսվեց թիակների
ձայնն, ու նավակը շարժվեց, իր
հետ տանելով այս չորս մարդկանց
դեպի հեռավոր ֆրանսիա: Իսկ
մանրավաճառը տուն դարձավ, թիկ-
նոցի տակ թագցնելով իր «չաղ»
վաստակը — 2000 լիվով լի քսակը:

Ապակեզդործ բանվորների փա-
խուստը Վենտիկում նկատեցին այն
ժամանակ, յերբ նրանք արդեն Փա-
րիզումն եյին և հայելիներ եյին
արտադրում: Զուր եր ճգնում Վե-
նետիկի դեսպանն իմանալու, թե
վորտեղ են նրանք. նրանց այնպես
եյին թագցրել, վոր անհնար եր
իմանալ նրանց տեղը:

Սակայն չորս բանվորը — քիչ եր:
Մի քանի շաբաթ անց, ապակե-
գործների մի նոր խումբ՝ դարձյալ
չորս հոգի, ծովեղերյա պահակների
քթի տակով փախան դարձյալ
Փարիզ:

Վենետիկի կառավարությունը
դժողով եր իր գեսպանից, վոր վոչ
մի կերպ չկարողացավ իմանալ, թե
վորտեղ ե գտնվում ֆրանսիական
գործարանը և նոր գեսպան նշա-
նակեց՝ Գվիստինիանի անունով
մեկին:

Գվիստինիանին շուտով գտավ
փախստականների հետքերն ու
նրանց իր մոտ հրավիրեց: Նա չվըս-
տահացավ անցամբ անցնել գործա-
րան: Փախստականներից միքանի-
սին նա համոզեց վերադառնալու:

Սակայն Կոլբերն ել քնած չեր:
Նա ամեն կերպ աշխատում եր վե-
նետիկցիներին պահել ֆրանսիա-
յում: Նրանց փոխադրեցին պալատ,
անհաշիվ փող եյին տալիս, ըն-
տանիքներին ոգնեցին Վենետիկից
փախչելու և ազատվելու մահվան
փտանգից: Վենետիկի կառավարու-
թյունը հետապնդեց «հանցագործ
ապակեգործների» կանանց ու զա-
վակներին, բայց անոգուտ:

Զուր եր Գվիստինիանին վե-
նետիկցիներին թողություն և յու-

ըաքանչյուրին հինգ հազար տղւ-
կատ* խոստանում: Նրանք չեյին
ուզում հեռանալ Փարիզից, ուր
ապրում եյին հրաշալի պայման-
ներում: Փախստականները բոլորո-
վին մոռացան սարսափելի որենքը,
վոր նրանց մահ եր սպառնում:

1667թ. հունվարին, Փարիզ գա-
լուց մեկ ու կես տարի անց ամե-
նալավ վարպետը մեռավ: Յերեք
շաբաթ անց մեռավ մի ուրիշ, վորը
շատ հաջող կերպով ապակի թիր
փչում: Բժիշկները գտան, վոր մահ-
վան պատճառը թունավորումն ե:

Նույն ժամանակները վենետի-
կում բանտարկվեցին յերկու մավա-
կեգործ, և հենց բանտում ել սպան-
վեցին, վորովհետև փորձել եյին
ֆրանսիա փախչել:

Փարիզի գործարանում աշխա-
տող բանվորներն ան ու սարսափի
մեջ եյին: Նրանք խնդրեցին թուլ
տալ՝ տուն վերադառնալու: Կոլ-
բերն այլևս չեր հակառակում: Բոլոր

* Հին վոռկյա գրամ իտարիայում (մոռ
3 սուբլի):

գաղտնիքներն արդեն հաղորդել
ելին, և ահազին գումարներ ելին
ստանում ֆրանսիական գանձա-
րանից: Գործարանի աշխատանքը
չեր ընդհատվում: Վերսալի, Լուվրի
և մյուս պալատների գահիներն
արդեն զարդարված եյին ֆրան-
սիական գործարաններում պատ-
րաստած հայելիներով:

Պալատական կանայք պճնվում
եյին ֆրանսիական հայելիների
առջև: Յեկ նրանցից վոչ մեկին
հայելու մեջ չերևաց վենետիկի ա-
պակեգործի պատկերը, վորը պատ-
րաստել ել այդ հայելին և այդ պատ-
ճառով թունավորվել եր վարձված
մարդասպանների կողմից:



Ի՞՞Չ ԱՌ ՄԵՐ ՊԵՀԸ ԸՆՈՒԹԻՄ

Այժմ հերթը հասավ մեր պահա-
րանին: Յեթե բաց անենք, այնտեղ
կտեսնենք մի զարմանալի բան —
ողից պատրաստած զգեստ: Միա-
ժամանակ դուք կգտնեք յերեք հա-
նելուկ, վոր յես ասել եյի ոկր-

Ի՞նչու մահուդը թաց շորի վրա-
յից են արդուկում:

Ի՞նչու մուշտակը տաքացնում է:
Ի՞նչն ե ավելի լավ տաքացնում
յերեք շապիկը, թէ յեռակի հաս-
տության մեկ շապիկը:

Ի՞նչի ՅԵՇՈՐԵ ՏԵՇՑՆՈՒՄ

Ամենից առաջ հարց տանք-
Արդյոք ձիշտ ե, վոր հագուստը
տաքացնում է:

Այն ինչ պարզ ե, վոր վոչ թե
մուշտակն ե տաքացնում մարդուն,
այլ ընդհակառակը, մարդն ե տա-
քացնում մուշտակին: Ուրիշ կերպ
չի յել կարող լինել: Չե վոր մուշ-
տակը — վառարան չի: Բա ի՞նչպես
կհարցնեք դուք: Միթե մարդը —
վառարան ե:

Այն, վառարան ե: Մենք գիտենք,
վոր կերպուրը — վառելիք ե, վոր
ալրվում ե մեր մարմնի ներսում:
Ճիշտ ե, այրումը չի նկատվում,
բայց արտահայտվում ե այն ջեր-
մությամբ, վոր մենք զգում ենք
մեր մարմնի ներսում:

Այս ջերմությունը պետք ե պահ-
պանել: Փողոցներն անհնար ե տա-
քացնել, ուստի և մենք հաստ պա-
տերով տներ ենք կառուցում, ձմեռը
կրկնակի շրջանակներ ենք դնում
պատուհանին, թաղիքով պատում
ենք գոները և այն: Այդ ե պատ-
ճառը գարճյալ, վոր մենք հագ-
նվում ենք: Փոխանակ մեր մարմնի
ջերմությամբ փողոցի կամ սենյակի
ողը տաքացնելու, մենք տաքա-
ցնում ենք այն հագուստը, վոր
ջերմությունը պահպանում ե մեր
մարմնի շուրջը: Իհարկե հագուստն
ել ե ջերմություն դուրս թողնում,
բայց ովելի դանդաղ, քան մեր
մարմինը:

Ուրեմն մենք ստիպում ենք, վոր
մեր փոխարեն հագուստը մրսի:

Իսկ հագուստի մրսելն այն ե,
վոր նա կամաց կամաց (նայած թե
ի՞նչպիսի կտորից ե կարած) դուրս
ե թողնում մեր մարմնից ստա-
ցած ջերմությունը, փոխարենը
մարմնից ստանալով նրա կենդանի
ջերմությունը:

ՈԳԻՑ ՇԻՆԱԾ ՊԱՏԵՔ

Ի՞նչն է ԱԼԵԼԻ ՏԵՇ ՊԱՀՈՒՄ. ՅԵ-
ԲԻՔ ՇԵՊԻԿ, ԹԵՇ ՅԵԹԱԿԻ ՀԱՍՈՒ-
ԹՅԱՆ ՄԵԿ ՇԵՊԻԿ

Յերեք շապիկն ավելի տաք ե-
պահում:

Վորովհետև եյականը վոչ մե
շապիկն ե կամ շապիկները, այլ
նրանց արանքում գտնված ողբ:
Ողբ ջերմության վատ հաղորդիչ ե:
Քանի շապիկների միջև գտնված
ողի քանակը շատ ե, այնքան ավելի
հաստ ե ողի շերտը, կամ, ինչպես
ասացինք քիչ վերև, ողի զգեստը,
փոք ցրտից պաշտպանում ե մեր
մարմինը:

Յերեք շապիկ—միենույն ե, թե
յերեք ողեղեն զգեստ:

Իսկ մի շապիկն, ինչքան ել նա
հաստ լինի, միենույն ե, միմիայն
մեկ հատ ողային հագուստի ար-
ժեք ունի:

Ահա թե ինչու ձմեռը շատերն
իրենց մարմնի վրայից մեկից ա-
վելի սպիտակեղեն — շապիկներ են
հագնում:

Ինչու ձմեռը պատուհաններին
կրկնակի փեղկեր ենք դնում:
Վորպեսզի ապակիների միջև
ողային պատեր ստեղծենք: Ողա-
յին պատն արգելում ե, վոր սեն-
յակի ջերմությունն արագությամբ
ցնողի:

Ուրեմն, յերկու փեղկ կամ ըլր-
ջանակ — նշանակում ե 2 շապիկ:
Այս, համարյա թե միենույն ե:
Գիտնականները գտել են, վոր
ողեղեն պատերն ավելի լավ են
պահպանում ջերմությունը, քան
թե աղյուսի պատերը: Ահա թե
ինչու ներկայումս փուչ աղյուս-
ներ են պատրաստում, այսինքն՝
այնպիսի աղյուսներ, վորոնց մեջ
անցքեր և դատարկ տարածու-
թյուններ կան: Սա կարծես թե
նման ե այն կարկանդակին, վորի
միջուկը հանել են:

Փուչ աղյուսներից շինած տները
ավելի տաք են լինում, քան լիքը
աղյուսից շինած տները: Ինչու:

Վորովհետեւ այսպիսի անեղի
կեսն ողից ե կառուցված:

Խնջո՞ր ԱՄԸՆԹԸ ԶԵՐՓԵ ԲԻՒԻԵ ՅՈՐ
ՀԱԴՆԵԼ

Վորովհետեւ բրդե հագուստը շատ
է տաքացնում:

Սակայն վոչ միայն այս պատ-
ճառով:

Բուրդը մի վատ հատկություն
ունի: Ցեթե բուրդը թրջենք — շատ
դանդաղ կչորանա:

Ուստի և տաք ժամանակ բուրդը
պահում ե մեր մարմնի արտադրած
խոնավությունը (քրտինքը), վորը
շատ դանդաղ ե գոլորշիանում բրդի
միջով: Իսկ այս բանը և անհաճո
յե և վասս ե մեզ:

Շատ հաճելի յե ու ոգտակար՝
ամառը բամբակից կամ վուշից
(քաթան) պատրաստած կտորներ
հագնել: Թե՛ բամբակը և թե՛ վուշը
հեշտությամբ են չորանում, հեշ-
տությամբ ել իրենց միջով անց
են կացնում ողը: Ինչպես ասում
են՝ ողի լավ հաղորդիչներ են:

ԽԽՉՈ՞Ր ՑԵՆՔ ՍՊԻՏԱԿԵՎԵՆ
ՀԱԳՆՈՒՄ

Ցեթե մեր հագուստը հագնեյինք
մերկ մարմնի վրայից — կմրսեյինք,
վորովհետեւ մարմնի շուրջն առա-
ջացած ողի հոսանքը (շերտը) շատ
նվազ կիմներ:

Իհարկե, միայն ջերմության
պատճառով չե, վոր սպիտակեղեն
ենք հագնում: Սպիտակեղենը կա-
րելի յե շուտ - շուտ լվանալ, իսկ
դրսի հագուստը — վոչ:

Բուրդը վախենում ե յեռացնե-
լուց: Ցեռ տված բուրդը «խխմում ե»
թաղիքի պես ճմլվում, վորովհետեւ
բրդի թելիկները հարթ չեն, այլ
թեփուկներ ունեն: Այս թեփուկ-
ները թրջելով միանում են ու
խճճվում:

Բուրդը կարելի յե տաքացնել
մինչև 60°:

Հենց այդ ե պատճառը, վոր բըր-
դի կտորը չի կարելի շիկացած
վառարանի գեմ չորացնել կամ շի-
կացած արդուկով արդու կել:

Բրդե կտորը կարելի յե արդու-
կել միայն վրան թաց շոր գցելով:
Իսկ բամբակն ու քամբանը շո-
ղից չեն վախում: Ահա թե ինչո՞ւ
բրդի (մահուդի) կամ գործած
կտորի տակից մենք սպիտակե-
ղեն ենք հագնում, վորը կարելի
յե լվանալ ու արդուկել:

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՍԵՆՑԿՈՒՄ ՃԵՐԲՈՐԴՈՂ-
ՆԵՐԻ ՀԵՐԱՐ

Մեր ճանապարհորդությունը
վերջացավ: Հազիվթե մի քսան քայլ
անցանք, բայց ինչեր ասես չտե-
սանք, չլսեցինք, չհիշեցինք. ինչ-
քան հանելուկներ գտանք:

Սովորաբար ճանապարհորդներն
իրենց հետ ուղեցույց են վերցնում,
մի այնպիսի գրքույկ, վորտեղ ման-
րամասն թվում և ճանապարհին
ընկած ծովերն ու գետերը, գյու-
ղերն ու քաղաքները, ինչ փողոց-
ներ, շենքեր ու արձաններ կան
այդ քաղաքներում և ինչի մասին
են հիշեցնում այդ արձանները: Ով
վոր այսպիսի ուղեցույց ունի, նա

այլես ամեն քայլափոխին կանգ չի
առնի, չի դիմի պատահական ան-
ցորդներին ինչ և ինչո՞ւ հարցերով:
Այս գրքույկն այդ բազմաթիվ
հարցերի մի մասի պատասխաններն
եւ տալիս և իր սենյակում ճանա-
պարհորդել ցանկացողի համար մի
այդպիսի ուղեցույցի տեղ կարող
է ծառայել:



ԹԹԱ. Ա. Դ. Ա. Ա. Թ. Յ. Շ. Ա. Ա.

Ճամբորդություն սենյակում 3-

Առաջին կայարան. Զրի խողովակ 10

Վաղժաց ե, վոր մարդիկ լվացվում են: Ինչո՞ւ
յեն ջրով լվացվում: Մարդն ինչպես հարկադրեց
աշխատել սապոնի պղպջակներին: Ինչո՞ւ յեն
ջուրը խմում: Կարծիք ե արդյոք ջուրը տունը
պայթեցնել: Պինգ ջուր: Թե ինչո՞ւ չի կարելի
չմշկել հատակի վրա: Կա արդյոք անթափանց
ջուր և թափանցիկ յերկաթ:

Յերկրորդ կայարան. Վառարան 27

Վաղժաց ե՝ ինչ մարդիկ ծանոթացել են
կրակին: Ինչո՞ւ յե լուցկին վառվում: Վաղժաց
և արդյոք վոր լուցկի ունենք ինչո՞ւ ջուրը չի
այրվում: Ո՞ւր և կորչում փայտը, յերբ վառում
ենք վառարանը: Ինչո՞ւ յե վառարանը վառ-
վելիս դռնում: Ինչո՞ւ յե ջուրը հանգցնում
կրակը: Ինչո՞ւ յենք վշտում, յերբ ուզում ենք
հանգցնել լուցկին: Հանելուկ վառարանի մա-
սին:

Յերրորդ կայարան։ Սեղան և պլիտա 50

Խոհանոց — բարբասորիատ թե ի՞նչ և ի՞նքը կարտոֆիլլ։ Ի՞նչո՞ւ հում կարտոֆիլլ չեն ուտում։ Ի՞նչո՞ւ տապակած կարտոֆիլլ կեղեք չորանում ե, իսկ խաղածինը՝ վոչ ի՞նչո՞ւ ուտայած սպիտակեղենը կարծրանում է, ի՞նչովես և գոյանում հացի կեղեք։ Ի՞նչո՞ւ յե հացը համանում։ Ի՞նչո՞ւ յե խմորը բարձրանում, յերբ նրա մեջ խաչ ենք դնում։ Ի՞նչո՞ւ հացի փափուկ մասը ծակոտիներ ունի։ Հացի քիմիական պատմությունը։ Ի՞նչո՞ւ գարեջուրը փրփրում է, թշում։ Ի՞նչ և սուպը։ Ի՞նչո՞ւ յենք միս ուտում։ Ի՞նչո՞վ և կացրած միսը։ Ամբողջ ճաշը մի շահ մեջ։ Ի՞նչո՞ւ յե կաթը թթվում։ Վարժեղից են պանրի ծակոտիները։ Ի՞նչո՞ւ պանիրը յերկար ժամանակ չի փշանում։ Ի՞նչ եյին ուտում մարդիկ անցյալում։ Իսկ ի՞նչ եյին խմում մարդիկ անցյալում։ Ի՞նչո՞վ և ի՞նչովես եյին ուտում։

Չորրորդ կայարան։ Խոհանոցի դարակը 84

Յոթ աման — յոթ հանելուկ։ Ի՞նչո՞ւ մի իրը շինում են մի նյութից, մյուսը՝ ուրիշ նյութից։ Վերն և ամենաամուր նյութը և վերն և ամենից անկայունը։ Ի՞նչո՞ւ յե յերկաթը ժանգոտում։ Ի՞նչո՞ւ թիթեղն ավելի քիչ և ժանգոտում, քան սովորական յերկաթը։ Ի՞նչից են շինած յերկաթե իրերը։ Ի՞նչո՞ւ չուգունը նման չե յերկաթին, իսկ յերկաթը՝ պողպատին։ Հիգանդ կոճակներ։ Դեղին պղինձ լինում և թե վոչ։ Ի՞նչ և պատրաստվում կալից։ Կավե կը ձուճը շտոր բան կասի մեզ։

166

Հինգերորդ կայարան. Բուֆետ 118

Խոհանոցի կճռճի կարեոր ազգականները։ Ո՞վ և հնարիել ձենապակին։ Ճենապակու արտադրության գաղտնիքը։ Զեր բուֆետում կմնա պազից պատրաստած իրեր։ Կարծր հեղուկներ կան արդյոք։ Սապոնի պղպջակների գործարան։ Զնաբվող ապակու

Վեցերորդ կայարան. Պահարան 144

Վերջին կայարանը։ Հայելու պատմությունը։ Ի՞նչ կա մեր պահարանում։ Ի՞նչո՞ւ յե շորը տաքացնում։ Ի՞նչո՞ւ և ավելի տաք պահում — յերեք շապիկը, թե յեռակի հաստության մի շապիկ։ Ողից շինած պատերը ի՞նչո՞ւ ամառը չարժեքութեան շամար։ Ի՞նչո՞ւ համար։ Ուղեցույց սենյակում ճամբորդողների համար։

10001/399

1-50

ՀՀ Ազգային գրադարան



NL0144101

16267